# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 (1754) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 6, 2016
VOLUME 36, NO. 4 (1754) SATURDAY, FEBRUARY 6, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Ատրպէյճանի Վարկանիշը «Աղբի» Հաւասար

Միջազգային շուկայի վրայ բարիւղի գինի անկումը կը շարունակուի, ու անոր հետ մեկտեղ տնտեսական անկում կ'արձանագրեն յատկապէս այն երկիրները, որոնք իրենց ամբողջ տնտեսութիւնը կառուցած են բարիւղէն ստացուող եկամուտներուն վրայ: Այդ երկիրներու առաջին շարքին վրայ է Ատրպէյճանը, որու տնտեսութիւնը ներկայիս յայտնուած է խիստ ծանր վիճակի մէջ, որ կրնայ նոյնիսկ վտանգել Իլհամ Ալիեւի իշխանութիւնը:

Միջազգային հեղինակաւոր Standard and Poor's վարկանիշային ընկերութիւնը վերջերս եկաւ Ատրպէյճանի վարկանիշը յայտարարելու «աղբի» հաւասար եւ զգուշացնելու միջազգային ներդրողները, որ ձեռնպահ մնան Ատրպէյճանի մէջ ներդրումներ կատարելէ եւ կամ վարկ տրամադրելէ:

Շրջանառութեան մէջ եղող լուրերու համաձայն, Արժութային Միջազգային Հիմնադրամը եւ Համաշխարհային Դրամատունը, որոնք երկուքն ալ կը գտնուին Միացեալ Նահանգներու ազդեցութեան տակ, կը պատրաստուին 4 Միլիար տոլարի վարկ տրամադրելու Ատրպէյճանին՝ անոր տնտեսութիւնը եւ դրամանիշը կայունացնելու նպատակով:

Այս առթիւ, Ամերիկայի Հայկական Համագումարը նամակ մը յղած է Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քէրին եւ գանձապետարանի քարտուղար Ճէք Լիւին, կոչ ընելով անոնց, որ ընդդիմանան Ատրպէյճանին յաւելեալ վարկ տրամադրելու ծրագիրներուն, յատկապէս որ այդ գումարներու մեծ մասը դուրս կու գայ ամերիկացի հարկատուներու գրպանէն:

Հայկական Համագումարը կը յայտարարէ, որ փոխանակ պարգեւատրելու աշխարհի ամենէն աւելի կոռումպացուած եւ բռնապետական երկիրներէն մէկուն, Ատրպէյճանին պէտք է պարտադրել շատ անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնել ու օգտագործել իր նաւթային միջոցները ի բարօրութիւն իր ժողովրդի, այլ ոչ թէ հայերու հաշւոյն:

Հայկական այլ կազմակերպութիւններ պէտք է միանան Հայկական Համագումարի այս կոչին: Անհատ Ամերիկահայեր եւս, կրնան դիմել իրենց ներկայացուցիչներուն, պահանջելով որ Ատրպէյճանի տրամադրուելիք որեւէ վարկ ենթակայ ըլլայ խիստ պայմաններու եւ յատկապէս, երաշխաւորուի որ այդ գումարները չօգտագործուին Ղարաբաղի եւ Հայաստանի վրայ նոր յարձակումներ կատարելու:

«ՄԱՍԻՍ»

## Ըստ Նախարար Էդուարդ Նալբանդեանի Հայ-Թուրքական Յարաբերութիւններուն Մէջ Դրական Տեղաշարժ Չէ Արձանագրուած




*Էդուարդ Նալբանդեան 2015 թուականի հաշուետու մամլոյ ասուլիսի ընթացքին*

*Փետրուար 2-ին Երեւանի մէջ կայացած՝ 2015 Թուականի հաշուետու մամլոյ ասուլիսի ընթացքին, Հայաստանի արտաքին գործոց նախարարը Էդուարդ Նալբանդեան անդրադարձաւ Հայ-Թուրք յարաբերութիւններուն, շեշտելով որ, Թուրքիոյ ապակառուցողական դիրքորոշման պատճառով հայ-թրքական յարաբերութիւններուն մէջ որեւէ դրական տեղաշարժ չէ արձանագրուած:*

*Թուրքիոյ Նախագահը չէ պատասխանած Հայաստանի կողմէ Թուրքիային ուղղուած բարի կամքի մէկ դրսեւորման՝ 2015-ի. Ապրիլի 24-ին այցելելու Երեւան եւ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին միասին յարգանքի տուրք մատուցելու համար:*

*Ղարաբաղի հարցով եւս, Թուրքիոյ դիրքորոշման մէջ ոչ մէկ նոր բան չկայ:*

*Անդրադառնալով Թուրքիոյ կողմէ կրկնուող տեսակէտին, թէ հայ-թրքական յարաբերութիւնները կարելի չէ կարգաւորել, քանի դեռ լուծուած չէ Ղարաբաղի հակամարտութիւնը, Նալբանդեան ըսաւ, որ տարօրինակ է, երբ պայմաններ առաջ կը քաշէ ոչ թէ Հայաստանը, այլ Հայոց ցեղասպա-*


*Շար.ը էջ 4*


## Հայոց Ցեղասպանութեան Յանձնախումբի Արդարութեան Քայլարշաւը՝ Ապրիլ 24ին

Կոչ կ'ընենք հայութեան, որ ի մի գալով՝ մասնակցին Կիրակի, Ապրիլ 24ին, կ.ե. ժամը 1-ին, Լոս Անճելըսի Ուիլշըր եւ Քրեսընթ Հայթս պողոտաներու խաչմերուկին վրայ սկսող Արդարութեան քայլարշաւին, Թուրքիոյ հիւպատոսարանին առջեւ՝ դատապարտելու համար Հայոց Ցեղասպանութեան ուրացումը:

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին յաջորդած ժամանակահատուածը թեւակոխելով՝ մինչ Ցեղասպանութեան ուրացումը կը շարունակուի, Հարաւային Քալիֆորնիոյ հայկական կազմակերպութիւնները կոչ կ'ընեն հայ համայնքին, որ սթափ եւ գործելու պատրաստ վիճակի մէջ մնան, որպէսզի Ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու պայքարը շարունակուի Լոս Անճելըսը ցնցած 166,000 հոգինոց քայլարշաւին ոգիով:

Կը հաւատանք, որ մեր ձայները աւելի ազդու եւ արդիւնաբեր կը դառնան, երբ անոնք միասնական են, եւ այդ պատճառով ալ հպարտ ենք յայտարարելու, որ այս տարի եւս, համայնքային կազմակերպութեանց միացեալ ջանքերով պիտի շարունակենք իրականացնել ոգեկոչման եւ պահանջատիրական ձեռնարկները, նորակազմ՝ Հայոց Ցեղասպանութեան յանձնախումբի հովանիին տակ:

Հայոց Ցեղասպանութեան յանձնախումբին մաս կազմող կազմակերպութեանց ցանկը կու տանք ստորեւ:

Յաւելեալ տեղեկութիւններ պիտի հրապարակուին յառաջիկային:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Հիւսիսային Ամերիկայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմ


*Շար.ը էջ 4*


## Հայաստան Կը Շարունակէ Մնալ «Մասամբ Ազատ» Երկիր

*Մարդկային Իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) եւ Ազատութեան Տուն (Freedom House) հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնները անցած շաբաթ հրապարակած իրենց զեկոյցներուն մէջ կը պնդէին որ, Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու վիճակը մնացած է անհարթ, եւ Հայաստանը կը շարունակէ մնալ «մասամբ ազատ» երկիր:*

*Հայաստանի Հելսինքեան կոմիտէի ամենամեայ զեկոյցը եւս եկաւ անդրադառնալու շարունակուող բռնութիւններուն, քաղաքական հետապնդումներուն, խօսքի եւ հաւաքներու ազատութեան ճնշումներուն եւ խոշտանգումներու մասին:*

*Կազմակերպութեան ղեկավար, իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանի խօսքով՝ իրենք մեծ ցանկութիւն ունին գրելու մարդու իրաւունքներու ոլորտէն ներս դրական տեղաշարժերու մասին, սակայն վիճակը կայուն անբաւարար է. - «Եթէ մի պետութեան մէջ չկայ իշխանութեան տարանջատում եւ անկախ դատական համակարգ, ապա այդտեղ խօսել մարդու իրաւունքների պաշտպանութեան մասին անիմաստ է»:*

*Հայաստանի Հելսինքեան կոմիտէի հրապարակած զեկոյցին մէջ որպէս տարուայ ամենանշանակալի իրադարձութիւն կը նշուի ամռան ընթացքին ելեքտրականութեան սակագնի բարձրացման դէմ պայքարը:*

*«Երբ որ 230-ից աւելի մարդ ձերբակալուեց եւ լրատուամիջոցների նկատմամբ եղան բռնութիւններ եւ ակտիւիստների նկատմամբ բռնութիւն, եւ որեւէ մէկը պատասխանատուութիւն չկրեց դրա հետ կապուած, այդ դէպքը բաւարար է՝ գնահատելու խաղաղ հաւաքների իրաւունքի հետ կապուած հետընթացը»:*

*Զեկոյցը կ'անդրադառնայ նաեւ ներքաղաքական զարգացումներուն՝ յիշատակելով «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանի հեռացումը քաղաքական ասպարէզէն:*

*Կը յիշուի նաեւ, որ Սերժ Սարգսեանը նախաձեռնեց սահմանադրական փոփոխութիւնները, քանի որ չէր կրնար երրորդ անգամ նախագահ ընտրուիլ:*

*«Իշխանութիւնների կողմից վարչական ռեսուրսի չարաշահումը մեծ ազդեցութիւն գործեց հանրաքուէի արդիւնքների վրայ'», - կը գրեն զեկոյցի հեղինակները՝ աւելցնելով, որ հանրաքուէն անցած է կոպիտ խախտումներով՝ լցոնումներ, կրկնակի քուէարկութիւններ, դիտորդներու ու լրագրողներու հասցէին սպառնալիքներ եղած են:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Իշխանութեան չուտուող ճաշը

*ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ*

Հայաստանում Եւրամիութեան դեսպան Պյոտր Սւիտալսկին անհրաժեշտ է համարում Բարձրաստիճան պաշտօնեաների էթիկայի յանձնաժողովի լիազօրութիւնների ընդլայնումը կոռուպցիայի դէմ պայքարի արդիւնաւէտութեան համար: Նոյն յանձնաժողովի նախագահը եւս դժգոհում է լիազօրութիւնների բացակայութիւնից եւ օրէնսդրական անյստակութիւններից:

Կոռուպցիայի դէմ պայքարի մեխանիզմների ներդրման հարցը Հայաստանում առանցքային հարց է եւ քննարկւում է տարիներ շարունակ: Այդ քննարկումները մի կողմից ռացիոնալ են, կարեւոր, անհրաժեշտ, միւս կողմից, սակայն, դրանք կամայ, թէ ակամայ վերածւում են կոռուպցիայի դէմ պայքարի գործում առանցքային խնդրի ծխածածկոյթի: Այդ առանցքային գործօնը, խնդիրը Հայաստանի իշխանութեան իշխող «էլիտայի» քաղաքական կամքն է: Մեծ հաշուով, երբ առկայ է այդ քաղաքական կամքը, մեխանիզմների հարցը դառնում է տեխնիկական, նոյնիսկ աւելորդ: Աւելին, ըստ էութեան, որպէս պետութիւն, պետականութիւն, Հայաստանն արդէն իսկ օժտուած է այդ մեխանիզմներով:

Մասնաւորապէս՝ Հայաստանի իրաւապահ համակարգը, ինչպէս որեւէ պետութեան իրաւապահ համակարգ ինքնին, արդէն իսկ կոռուպցիայի դէմ պայքարի մեխանիզմ է: Միւս մեխանիզմը դա ազատ մամուլն է, ազատ խօսքը: Հայաստանում այդ առումով էլ իրավիճակը, խոշոր հաշուով, դրական է, կայ ազատ խօսք, կայ մամուլի բազմազանութիւն, տեղեկատուութեան միջոցների հասանելիութիւն եւ ազատութիւն: Ահա այս երկու առանցքային ինստիտուտները ի սկզբանէ ցանկացած պետականութեան համար կոռուպցիայի դէմ պայքարի մեխանիզմ են, այսպէս ասած բնական մեխանիզմ՝ կայ պետութիւն, ուրեմն կայ այդ մեխանիզմը: Առաջանում է այդ մեխանիզմի արդիւնաւէտութեան բարձրացման խնդիրը:

Այստեղ խօսքը թէ լիազօրութիւնների, հնարաւորութիւնների շրջանակի մասին է, թէ մասնագիտական կոմպետենտութեան: Սակայն, տուեալ պարագայում, իրավիճակը Հայաստանում այնպէս է, որ թերեւս վստահաբար կարող ենք եզրակացնել, որ մասնագիտական կոմպետենտութիւնը խնդիր է, բայց ոչ հանգուցային կամ վճռորոշ: Իհարկէ, յատկապէս մեդիաշրջանակներում կայ հակակոռուպցիոն թեմաների հետ աշխատանքի գրագիտութեան, արդիւնաւէտութեան բարձրացման շօշափելի տեղ, սակայն առկայ իրավիճակն էլ բաւարար է, որ մեդիադաշտը զգալիօրէն կատարի իր առաքելութիւնը հակակոռուպցիոն գործում: Այլ է խնդիրը իրաւապահների պարագայում: Այստեղ մասնագիտական կոմպետենտութեան հարց կայ միարժէք, սակայն դժուար է գնահատել, թէ ինչքանով է դա ազդեցիկ արդիւնքի անբաւարարութեան մասով, որովհետեւ չկայ այն քաղաքական կամքը, որը պէտք է գործի դնի իրաւապահ համակարգը:

Այդպիսով, դրա փոխարէն Հայաստանում ստեղծւում են կառոյցներ, որոնք կարող էին լինել կոռուպցիայի դէմ պայքարի պետական մեխանիզմի համեմունքը, սակայն քանի որ այդ մեխանիզմը չի աշխատում, այդ յաւելեալ կառոյցները ըստ էութեան յայտնւում են մի վիճակում, երբ խոհարարը ճաշի հիմնական պարագաները չի լցրել կաթսայի մէջ եւ գցել է միայն համեմունքները: Եթէ կաթսայի մէջ չկան ճաշի հիմնական պարագաները, ապա որքան էլ ուժեղացնենք կամ մեծացնենք համեմունքների ծաւալը, համը, հոտը, միեւնոյն է՝ եփածը դրանից ճաշ չի դառնայ: Հայաստանում մենք ականատես ենք լինում հենց այդ իրավիճակին:

Իշխանութիւնը չունի կոռուպցիայի դէմ հետեւողական եւ սկզբունքային պայքարի քաղաքական կամք, դրա փոխարէն, աւելի շուտ այդ կամքը կեղծելու համար ստեղծւում են տարբեր կառոյցներ, որոնք ներկայացւում են որպէս քաղաքակիրթ աշխարհից փոխառուած փորձ: Բայց դրանք ընդամէնը հարեւանից փոխառուած համեմունքներ են, որոնք հարեւանի մօտ էֆեկտ են տալիս, քանի որ նա ճաշի միւս հիմնական պարագաները առաջինն է գցել կաթսայի մէջ, յետոյ համեմունքները: Քաղաքակիրթ աշխարհի մօտ դրա համար է կոռուպցիայի դէմ պայքարը ստացուել արդիւնաւէտ, յետոյ նոր առաջացել է այդ մեխանիզմները կատարելագործելու, այսպէս ասած բազմազան երաշխիքներով ապահովագրելու խնդիր:

Հայաստանը ճաշի պարագաները չի գցել, փոխարէնը ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացրել է համեմունքների վրայ: Արդիւնքում ոչ միայն ճաշը ուտելու բան չէ, այլ ուտելու համար մատուցուողը ճաշ չէ ընդհանրապէս: Որովհետեւ կոռուպցիայի դէմ պայքարն էլ պայքար չէ: Այն, ինչպէս ընտրութիւնները, Հայաստանում եւս կեղծւում է: Կոռուպցիայի դէմ պայքարի հարցում ամենակարեւորը, առանցքայինն ու ելակէտայինը իշխանութեան քաղաքական կամքն է: Դա պայմանաւորուած է էլիտաների գիտակցութեամբ: Խաղի կանոնները սահմանում են նրանք, եւ նրանք սահմանում են այն խաղի կանոնները, որոնք թելադրւում են էլիտայի ներքին արժէհամակարգով, աշխարհայեացքով:

Հայկական «էլիտան» ոտքից գլուխ հին ասիական արժէհամակարգի կրող է, որն իր վրայ չի կրում քաղաքակրթական էւոլիւցիայի բաւարար ազդեցութիւն՝ կոռուպցիան գլոբալ առումով խաղի վտանգաւոր կանոն համարելու համար, այդ թւում եւ՝ սեփական անվտանգութեան տեսանկիւնից: Այդ իրավիճակում, իհարկէ, այլ ելք չի մնում, քան փորձել իրավիճակի ինչ-որ փոփոխութեան հասնել թէկուզ իմիտացիոն մեխանիզմների կամ տարրերի ներդրումով, ինչն ակնյայտօրէն փորձում են անել, օրինակ, եւրոպացիները, որպէս կոռուպցիայի դէմ պայքարի գործում Հայաստանի հանրութեան գործընկերութեան յայտ ներկայացնող սուբիեկտ:

Անկասկած, նրանց մօտ չկայ պատրանք, որ այդ նոր դետալները կը բերեն որակական որեւէ արագ եւ շրջադարձային փոփոխութեան: Բայց ներկայումս հարց է նոյնիսկ էւոլիւցիոն, երկարաժամկէտ փոփոխութեան հեռանկարը, որովհետեւ փորձը, յամենայնդէպս, ցոյց է տալիս, որ առայժմ այդ նոր տարրերը աւելի արդիւնաւէտ են կոռումպացուած իշխանութեան, քան կոռուպցիայից յոգնած ու խոցուած հանրութեան ու պետութեան համար:

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Դաշնակցութիւնը յայտարարեց յանձնուելու մասին

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

ՀՅԴ ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը յայտարարել է, որ իշխանութիւնը հեղինակազրկուած է, բայց քանի որ աշխատանքի այլ դաշտ չկայ, իրենք գնում են այդ իշխանութեան հետ գործակցութեան ճանապարհով՝ երկրում որեւէ բան փոխելու համար:

Փաստօրէն, Դաշնակցութիւնը յայտարարում է յանձնուելու մասին: Որովհետեւ եթէ որեւէ քաղաքական ուժ յայտարարում է, որ աշխատանքի այլ դաշտ չկայ, ապա դա փաստացի դառնում է յայտարարութիւն անելանելիութեան մասին:

Ինչ է ստացւում՝ ՀՅԴ-ն ՀՀԿ-ի հետ քննարկում է գործակցութեան հարց, բայց դեռ ընդհանուր որեւէ յայտարարի չեկած յայտարարում է, որ դրանից բացի այլ ելք չունի: Տրամաբանութիւնը յուշում է, որ դրանից յետոյ իշխանութիւնն ուղղակի կը կարծրացնի իր դիրքորոշումը ՀՅԴ հանդէպ: Ընդ որում, կարծես թէ դա էլ տեղի է ունենում, քանի որ ՀՀԿ գործկոմի նիստն արդէն երկրորդ շաբաթն անընդմէջ քննարկում է հարցն ու չի գալիս որեւէ ընդհանուր յայտարարի:

ՀՀԿ-ն այլեւս չունի ՀՅԴ-ի հետ ընդհանուր յայտարարի գալու խնդիր, ՀՀԿ-ն պէտք է ընդհանուր յայտարարի գայ իր ներսում, դրանից յետոյ որոշումը յայտնելով ՀՅԴ-ին: Արմէն Ռուստամեանը փաստօրէն յայտարարում է, որ պատրաստ են սպասել որքան հարկ է: Դա է նշանակում յայտարարութիւնը, թէ աշխատելու այլ դաշտ չկայ:

Արդեօք Դաշնակցութիւնը որոշակի խուճապի է ենթարկուել ՀՀԿ գործկոմի երկու անպատասխան նիստերից յետոյ, համարելով, որ ՀՀԿ-ն գուցէ հաւանութեան չարժանացնի կոալիցիայի գաղափարը, կամ դնի շատ ծանր պայմաններ:

Թէ՞ ՀՅԴ-ն առժամանակ դուրս է գալիս խաղից, կասկածելով, որ գուցէ օգտագործւում է ՀՀԿ ներսում մի քանի բեւեռների յարաբերութիւնների պարզաբանման գործընթացում եւ Սերժ Սարգսեանը հենց դրա համար է կոալիցիայի մասին յայտարարութիւնը բաց թողել Հրանտ Մարգարեանի միջոցով, ոչ թէ նախ յայտնել այդ մասին ՀՀԿ-ին:

Միւս կողմից, մի կողմ քաշուելով հենց այդ շեշտադրումով՝ թէ նոյնիսկ հեղինակազրկուած իշխանութեան հետ աշխատելուն այլընտրանք չկայ, այլ դաշտ չկայ, ՀՅԴ-ն ոչ թէ փորձում է զերծ մնալ խաղարկուելուց, այլ ընդամէնը յայտարարում է, որ պատրաստ է աշխատել ՀՀԿ-ի ցանկացած թեւի համար, ով որ ուժեղ կը լինի ներկուսակցական պայքարում: Այսինքն, այդպիսով՝ անելանելիութեան հուչակումով նահանջելով, ՀՅԴ-ն իրականում փորձում է քաղել առաւելագոյնը, ներկայացնելով ցանկացած նժար ծանրացնելու յայտ եւ ՀՀԿ թեւերին հասկացնելով, որ միայն Սերժ Սարգսեանի «նժարի» պատանդը չէ:

Այդ մարտավարութեամբ Դաշնակցութիւնն ըստ երեւոյթին ակնկալում է բարձրացնել իր պահանջարկը ՀՀԿ ներսում, գուցէ համարելով, որ դրա ցածր լինելն է պատճառը, որ ՀՀԿ-ն արդէն երկրորդ շաբաթն է չի գալիս որեւէ ընդհանուր յայտարարի:

Բացառուած չէ նաեւ, որ Դաշնակցութիւնը դժգոհ է Սերժ Սարգսեանից, որ նա չի փորձում իրենց պայմանաւորուածութիւնը պարտադրել ՀՀԿ-ին: Եւ այդ պատճառով ՀՅԴ-ն ցոյց է տալիս, որ կարող է ՀՀԿ-ում գտնել այլ, աւելի վճռական եւ պայմանաւորուածութեանը հաւատարիմ գործընկեր: Հարցն այն է, թէ արդեօք դրանով հնարաւոր է որեւէ քայլի մղել կամ արագացնել Սարգսեանին, ով ամենալաւը գիտէ, թէ ինչքանով կարող են յուսալի լինել ՀՀԿ այլ թեւերը:

*«ԼՐԱԳԻՐ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Նախագահի Եղբօր Կարծիքով՝ Սերժ Սարգսեանը «Կը Մնայ Հայաստանում Որոշում Կայացնողների Թւում»՝

*Նախագահ Սերժ Սարգսեանի պաշտօնավարման երկրորդ ժամկէտից յետոյ էլ նա կը մնայ Հայաստանում որոշում կայացնողների թւում՝ «Ազատութեան» հետ զրոյցում կարծիք յայտնեց նախագահի եղբայրը՝ յատուկ յանձնարարութիւններով դեսպան Լեւոն Սարգսեանը:*



**Յատուկ յանձնարարութիւններով դեսպան Լեւոն Սարգսեան**

«Կարծում եմ՝ կուսակցական գործունէութեամբ կը զբաղուի», - նշեց Լեւոն Սարգսեանը, - «Եթէ ինքը կուսակցութեան ղեկավարն է, եւ ինչպէս ասացի՝ կուսակցական գործունէութիւնը կը շարունակի, իհարկէ քաղաքականութեան մէջ կը մնայ»:

«Ազատութեան» հարցին՝ դա արդեօ՞ք նշանակում է, որ Սերժ Սարգսեանը կը մնայ երկրում որոշում կայացնողների թւում, նախագահի եղբայրը պատասխանեց - «Եթէ Հանրապետական կուսակցութիւնը երկրում լուրջ դերակատարութիւն ունենայ, նշանակում է՝ կուսակցութեան միջոցով իհարկէ կ՚ունենայ»:

Նոր սահմանադրութեամբ Հայաստանը խորհրդարանական հանրապետութիւն է՝ վարչապետին տրուած առաւել լայն լիազօրութիւններով: Դիտորդները չեն բացառում, որ նախագահութեան երկրորդ ժամկէտից յետոյ Սերժ Սարգսեանը կարող է իր ձեռքում պահել իշխանութեան լծակները՝ ընտրուելով խորհրդարանի ղեկավար կամ պարզապէս պահպանելով ՀՀԿ ղեկավարի աթոռը:

«Ես ինչքան գիտեմ՝ ինքը բազմիցս է յայտարարել, որ ինքը ոչ մի պաշտօն չի զբաղեցնելու», - այս առնչութեամբ ասաց Լեւոն Սարգսեանը: «Ազատութեան» հարցին՝ հնարաւո՞ր է, որ այդ որոշումը փոխուի, նախագահի եղբայրը պատասխանեց - «Կարծում եմ, որ ոչ: Չգիտեմ՝ չեմ կարող ասել, որովհետեւ որոշումները փոխւում են ըստ հանգամանքների: Եթէ հանգամանքները փոխւում են, որոշումները փոխւում են»:

Գրեթէ երկու տարի առաջ՝ 2014թ Ապրիլին, երբ սահմանադրական փոփոխութեան գործընթացը դեռ նոր էր մեկնարկել, սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի հետ հանդիպմանը նախագահ Սարգսեանը յայտարարեց - «Պաշտօնապէս յայտարարում եմ, որ ես՝ Սերժ Սարգսեան, այլեւս երբեք չեմ առաջադրուելու Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնի համար: Եթէ վերջնական քննարկումների արդիւնքում իմ ցանկութեանը չհամապատասխանող ուղի ընտրուի, նկատի ունեմ պառլամենտական կառավարման մոդելը, ապա ես չեմ յաւակնի նաեւ վարչապետի պաշտօնին»:

Սահմանադրական հանրաքուէից ընդամէնը օրեր առաջ՝ ասուլիսի ընթացքում, Սերժ Սարգսեանը այդպէս էլ չյստակեցրեց՝ ի վերջոյ, նախագահի լիազօրութիւնները վայր դնելուց յետոյ ինչո՞վ է զբաղուելու, զբաղեցնելու՞ է արդեօք վարչապետի, Ազգային ժողովի նախագահի կամ նախագահի պաշտօնը:

«Դրա մասին կը խօսենք 2017 թուականի խորհրդարանական ընտրութիւններից յետոյ: Հիմա շատ վաղ է դրա մասին խօսելը», - ասաց Սերժ Սարգսեանը:

## Եթէ Ռուստամեանը Մէկ Անգամ Էլ Պնդի՝ Իշխանութիւնը Հեղինակազրկուած Է, Հետեւութիւն Կ՚անենք»-. Վ. Բաղդասարեան

*Եթէ ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեանը մէկ անգամ էլ պնդի, որ իշխանութիւնը հեղինակազրկուած է, մենք հետեւութիւն կ՚անենք: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը՝ անդրադառնալով Ռուստամեանի այն յայտարարութեանը, որ իշխանութիւնը հեղինակազրկուած է:*



**ՀՀԿ խմբակցութեան ղեկավար ՎահրամԲաղդասարեան**

«Արմէն Ռուստամեանն ու մեր դաշնակցական ընկերները բա իրենց թոյլ կը տան վարկաբեկուած մարդկանց հետ շփուեն, եթէ մեզ հետ շփւում են, ուրեմն դա նշանակում է՝ վարկաբեկուած չենք»,- ասաց Վահրամ Բաղդասարեանը:

Մեր ճշգրտող հարցին՝ այդ դէպքում ինչ է նշանակում Ռուստամեանի պնդումը, Բաղդասարեանը նախ փորձեց խմբագրել ապագայ կոալիցիոն գործընկերոջը, թէ «եթէ»-ները հանել են լրագրողները, խօսքի իմաստը խեղուել է: Երբ բառացի մէջբերեցինք Արմէն Ռուստամեանի ասածը, Բաղդասարեանը վրդովուեց. «Եթէ մէկ անգամ էլ Արմէն Ռուստամեանը դա պնդի, մենք հետեւութիւն կ՚անենք»:

Թէ ինչպէս է արտայայտուելու այդ «հետեւութիւնը», Բաղդասարեանը չմանրամասնեց:

Նշենք, որ Փետրուարի 1-ին Ազգային ժողովում իշխանութեան հետ կոալիցիա կազմելու անհրաժեշտութիւնն հիմնաւորելով՝ Արմէն Ռուստամեանը նշեց, որ դա իրավիճակը փրկելու միակ ճանապարհն է: Չզլացաւ յայտարարել, որ իշխանութիւնը հեղինակազրկուած է:

«Հայաստանում ուրիշ դաշտ չի մնացել իրական գործ անելու համար: Եթէ իշխանութիւնը հեղինակազրկուած է, բոլորիս պրոբլեմն է, չէ՞, իսկ մենք համարում ենք, որ իրավիճակի վրայ իրական ազդեցութիւն ունեցողը դա է: Հիմա մտնում ենք կոալիցիա, որ իշխանութեան մօտեցումները փոխուեն, երկրում իրավիճակ փոխուի: Ոչինչ թող մեր վարկանիշի անկման հաշուին երկրի վիճակը փոխուի»:

## Հայաստանի Խոշոր Հարկատուները 2015-ին Աւելի Քիչ Հարկ Են Վճարել

Հայաստանի հազար խոշոր հարկատուները 2015-ին աւելի քիչ հարկ են վճարել ոչ միայն 2014-ի, այլեւ՝ 2013 թուականի համեմատ:

Ֆինանսների նախարարութեան հրապարակած տուեալների համաձայն, անցած տարի առաջին հազար խոշորը հարկատուները վճարել են 696.5 միլիարդ դրամ, ինչը 2014-ի նոյն ցուցանիշից պակաս է 4 միլիարդով: Բայց եթէ Հայաստանի խոշորագոյն ընկերութիւնների վճարած հարկերը վերածում ենք դոլարի, ապա անկումը աւելի ակնառու է դառնում՝ անցած տարի վճարել են 1 միլիարդ 457 միլիոն դոլար, 2014-ին՝ 1 միլիարդ 684, իսկ 2013-ին՝ 1 միլիարդ 623 միլիոն դոլար, եւ սա այն պարագայում, երբ, դարձեալ ըստ պաշտօնական տուեալների, 2009 թուականից յետոյ Հայաստանում միշտ տնտեսական աճ է եղել:

Ֆինանսների նախարարութեան տուեալները վկայում են, որ խոշորագոյն ներկրողը՝ «Ալեքս Գրիգ» ընկերութիւնը, ով ըստ լրատուամիջոցների Հայաստան մի շարք ապրանքների ներկրման մոնոպոլիստն է եւ կապւում է Ազգային ժողովի մեծահարուստ պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանի հետ, 2015 թուականին վճարել է 38.1 միլիոն դոլար, ինչը ամենափոքր ցուցանիշն է 2009 թուականի տնտեսական ճգնաժամից ի վեր: Անգամ յետճգնաժամային առաջին տարում՝ 2010-ին, «Ալեքս Գրիգ»-ը վճարել էր մօտ 6 միլիոն դոլարով աւելի՝ 44 միլիոն դոլար:

2015-ին՝ 2014-ի համեմատ, դոլարով արտայայտուած քիչ հարկ են մուծել նաեւ միւս խոշոր ներկրողները՝ «Նատալի ֆարմ», «Քեթրին գրուպ» եւ այլ ընկերութիւնները:

## Հայաստանի Խորհրդարանը Քննարկեց Ստրասբուրգեան Բանաձեւերը

Ստրասբուրգեան ոչ հայանպաստ բանաձեւերը բուռն քննարկման առարկայ դարձան Ազգային ժողովում: Օրակարգին անցնելուց առաջ նախ խորհրդարանի խօսնակ Գալուստ Սահակեանը խորհուրդ տուեց տեղի ունեցածը չդիտարկել յաղթանակի կամ պարտութեան տեսանկիւնից: «Մանաւանդ որ, ինչպէս ասում են, պարտութիւնը որբ է, իսկ յաղթանակը բազում տէրեր ունի»,- ասաց նա:

Ուոլթերի վտանգաւոր զեկոյցն, ըստ Սահակեանի, միասնական ջանքերի շնորհիւ տապալուեց, Սարսանգի ջրամբարի մասին ընդունուած ոչ հայանպաստ բանաձեւն էլ Ազգային ժողովի նախագահը կոչ արեց քաղաքական շահարկումների առիթ չդարձնել:

«Կարծում եմ, որ դա չպէտք է դարձնել քաղաքական ու քաղաքագիտական էժանագին շահարկումների առարկայ, առաւել եւս՝ վերածել անմաքուր, անազնիւ խաղերի»,- ասաց նա:

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը նկատեց՝ ԵԽԽՎ-ի կողմից ընդունուած Սարսանգի ջրամբարի մասին բանաձեւը վտանգաւոր ձեւակերպումներ է պարունակում, մինչդեռ իշխանութիւնները փորձում են ամէն ինչ այնպէս ներկայացնել, կարծես Ստրասբուրգում ոչ մի վատ բան չի պատահել:

«Ստրասբուրգում պատահել է շատ վատ բան. առաջին անգամ Լեռնային Ղարաբաղի մասին այլեւս խօսւում է որպէս Ատրպէյճանի օկուպացուած տարածք, ընդ որում՝ Հայաստանի կողմից: Սա խայտառակութիւն է, սա ձախողում է, սա պարտութիւն է: Մենք ոչ թէ պէտք է հերքենք դա, այլ պէտք է վերլուծենք՝ ինչպէս անենք, որ նման բաներ այլեւս չկրկնուեն»:

Իշխանական թեւը շտապեց կշտամբանքով պատասխանել Զուրաբեանի քննադատութեանը: Ազգային ժողովի փոխխօսնակ Էդուարդ Շարմազանովը յայտարարեց.- «ԵԽԽՎ-ում ընդամէնը մէկ խմբակցութիւն է կողմ հանդէս եկել ատրպէյճանամէտ դիրքորոշմանը, դա «Լիբերալների եւ դեմոկրատների ալեանս» խմբակցութիւնն է, որի ներկայացուցիչ է նաեւ յարգարժան պարոն Զուրաբեանը՝ միակը Հայաստանի պատուիրակութիւնից»:

## Զ. Փոստանջեանը՝ Ընդդիմութեան Մէկ Միասնական Թեկնածո՞ւ

Կարէն Անդրէասեանի հրաժարականից յետոյ սկսեցին ակտիւօրէն շրջանառուել օմբուդսմենի թեկնածուների անուններ: ԱԺ անկախ պատգամաւոր Էդմոն Մարուքեանը յայտարարել է, որ յանձնաժողովում առաջադրելու է Զարուհի Փոստանջեանի թեկնածութիւնը:

«Մենք ցանկութիւն ունենք, որ ընդդիմութիւնն առաջադրի մէկ միասնական թեկնածու»,- «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց «Ժառանգութեան» պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը:

Տիկին Փոստանջեանի կարծիքով՝ օմբուդսմենի թեկնածութիւնը չպէտք է լինի պատահական ինչ-որ ընտրութիւն. «Որոշակի գիտելիքների տէր պէտք է լինի օմբուդսմենը, կեանքի որոշ ճանապարհ պէտք է անցած լինի»:

Պատգամաւորի համար անընդունելի է, որ օմբուդսմենի թեկնածութիւնն առաջադրելու է ոչ թէ Մարդու իրաւունքների, այլ Պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովը. «Մարդու իրաւունքների յանձնաժողովը ՀՀԿ համար անվերահսկելի է՝ այնտեղ ընդդիմութեան անդամները շատ են»:

# ԼՈՒՐԵՐ

## «Պատերազմի Դէպքում Ատրպէյճանը՝ Որպէս Պետութիւն, Կը Դադարի Գոյութիւն Ունենալ». Արման Նաւասարդեան

Ատրպէյճանի եւ Թուրքիայի քաղաքականութիւնն ուղղուած է ԵԱՀԿ Մինսկի խմբի դէմ: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է արտակարգ եւ լիազօր դեսպան Արման Նաւասարդեանը:

Անդրադառնալով ԵԱՀԿ ՄԽ գործունէութեան մասին Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի յայտարարութեանը՝ նա նշեց, որ հիմա Ատրպէյճանն ու Թուրքիան սկսել են գործել այդ ուղղութեամբ: «Եթէ Ատրպէյճանը դուրս գայ ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմից, ապա ինքն էլ հենց կը տուժի, քանի որ այս պահին չկայ այլ կառոյց, որը զբաղւում է ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորմամբ:



Արտակարգ եւ լիազօր դեսպան Արման Նաւասարդեան

Ատրպէյճանական կողմը չի համաձայնում ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլքի առաջարկին: Հիմա հարցն այս կերպ է դրուած. Անհրաժեշտ է կարգաւորել սահմանին խնդիրը եւ միայն դրանից յետոյ անցնել բանակցութիւնների, քանի որ այս պահին բանակցութիւններն անհնար են»,- ընդգծել է Նաւասարդեանը:

Նա չի բացառել, որ Բաքուն մտադիր է պատերազմ սկսել: «Երբ գազանին փակուղի ես մտցնում, նա յարձակւում է: Ատրպէյճանի դէպքում նման իրավիճակ է ստեղծուել: Կարծում եմ, որ անգամ Ռուսաստանը չի կարող կանգնեցնել դա: Ամէն բան կախուած է նրանից, թէ ինչպէս կը զարգանան իրադարձութիւնները Սիրիայում»,- նշել է փորձագէտը:

Նրա կարծիքով պատերազմի դէպքում Ատրպէյճանը՝ որպէս պետութիւն, կը դադարի գոյութիւն ունենալ, քանի որ իրավիճակն այնտեղ շատ ծանր է: «Թալիշները ու միւս ազգային փոքրամասնութիւնները Ատրպէյճանում իսկական ական են: Տնտեսական վիճակն այնտեղ նոյնպէս ծանր է»,- նշել է Արման Նաւասարդեանը:

Յիշեցնենք, որ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին մեղադրել էր իսլամաֆոբիայի եւ երկակի չափանիշներ կիրառելու մէջ: «Շատ եմ ցաւում, որ Մինսկի խմբի համանախագահները, որոնք պէտք է զբաղուեն այդ հարցով, ձգտում են ոչ թէ կարգաւորման, այլ հակամարտութեան սառեցման: Նրանց այսօրուայ գործունէութիւնը բացարձակապէս անիմաստ է: Նրանք ոչ միայն Հայաստանի վրայ ճնշում չեն գործադրում, այլ նաեւ պաշտպանում են նրան հնարաւոր խնդիրներից: Մենք մուսուլման ենք, այդ պատճառով էլ մեզ վերաբերւում են երկակի չափանիշներով»,- ասել էր Ալիեւը:

## ԵԽ-Ն Յորդորում Է Հայաստանին Արդիւնաւէտ Պայքարել Փողերի Լուացման Դէմ

Եւրոպայի խորհուրդը Հայաստանի իշխանութիւններին յորդորում է արդիւնաւէտ դարձնել փողերի լուացման դէմ իրաւապահների պայքարը:

Եւրախորհրդի փորձագէտները գտնում են, որ Հայաստանում փողերի լուացման հետաքննութիւնները շատ անբաւարար մակարդակի վրայ են գտնւում, եւ Հայաստանի իշխանութիւններին յորդորում են անյապաղ միջոցներ կիրառել՝ ապահովելու համար, որ իրաւապահների ջանքերը լիովին համապատասխանեն փողերի լուացման ռիսկերին, որոնք ծառացած են երկրի առաջ:

«Խաբէութիւնը, հարկերից խուսափելը, մաքսանենգութիւնը եւ իւրացումները փողերի լուացման ամենաբարձր ռիսկերն են: Հայաստանի տնտեսութիւնը, բանկային համակարգը եւ անշարժ գոյքի շուկան ամենախոցելի ոլորտներն են փողերի լուացման համար: Ֆինանսական ուսումնասիրութիւնները շատ արդիւնաւէտ են, սակայն իրաւապահները յաճախ արդիւնաւէտ չեն օգտագործում դրանք՝ փողերի լուացումից յանցաւոր եկամուտները ապացուցելու, հետեւելու, ձերբակալելու եւ բռնագրաւելու համար», - նշուած է Եւրոպայի խորհրդի պաշտօնական կայքում տեղադրուած հաղորդագրութիւնում:

Այս գնահատականները տեղ են գտել Հայաստանի վերաբերեալ վերջին զեկոյցի հիմնական եզրահանգումների շարքում: Եւրոպայի խորհրդի փորձագիտական յանձնաժողովը գնահատում է փողերի լուացման եւ ահաբեկչութեան ֆինանսաւորման դէմ կիրառուող միջոցները, դրանց դէմ տարուող պայքարը:

Նախատեսւում է, որ 2018 թուականի Ապրիլին Հայաստանը ներկայացնելու է իր զեկոյցը Եւրոպայի խորհրդի փորձագիտական յանձնաժողովին, իսկ մինչ այդ՝ այս տարուայ դեկտեմբերին Հայաստանը միջանկեալ զեկոյց է ներկայացնելու գործողութիւնների պլանի իր մօտեցումների մասին:

## Թուրք Պատգամաւորը Բողոքել Է, Թէ Դիարբեքիրի Փողոցներին Հայկական Անուններ Են Դրւում

Թուրքիայի «Ազգայնական Շարժում» կուսակցութեան պատգամաւորներից, հայատեաց Եուսուֆ Հալաչօղլուն բողոքել է, թէ Դիարբեքիրի նոր քաղաքապետ Գիւլթան Քըշանաքի օրօք Դիարբեքիրի փողոցներին ոչ թէ քրդական, այլ հայկական անուններ են դրւում:

Թուրքական ազգայնամոլական «Ենի Չաղ» պարբերականի փոխանցմամբ՝ Եուսուֆ Հալաչօղլուն պնդել է, թէ շատ սխալ է եղել քաղաքների կառավարման մասին նոր օրէնքը, որը մեծ լիազօրութիւններ է տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին: Հալաչօղլուն նեղսրտել է, թէ Դիարբեքիրի նոր կին քաղաքապետ Գիւլթան Քըշանաքը քաղաքի փողոցներին ու պողոտաներին ոչ թէ քրդական, այլ հայկական անուններ է տալիս:

Նշենք, որ Եուսուֆ Հալաչօղլուն «Թուրքական Պատմագիտական» ընկերութեան նախկին նախագահն էր, ով յայտնի էր պատմական փաստերի խեղաթիւրումներով:

## Տիգրան Սարգսեանն Անցել Է Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի Նախագահի Պարտականութիւնների Կատարմանը



Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեան

Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանը անցել է Եւրասիական տնտեսական յանձնաժողովի նախագահի պարտականութիւնների կատարմանը: Սարգսեանի թեկնածութիւնն այդ պաշտօնում հաստատուել էր 2015թ. Դեկտեմբերին Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհրդի նիստում ԵՏՄ նախագահների կողմից: Սարգսեանը փոխարինել է ՌԴ ներկայացուցիչ Վիկտոր Խրիստենկոյին:

Բացի այդ, փոխուել է նաեւ Յանձնաժողովի կազմը: Եթէ նախկինում իւրաքանչիւր պետութիւն ունէր կոլեգիայի 3 նախարար, ապա հիմա նրանց թիւը երկուսն է: Փետրուարի 1-ից Կոլեգիայի անդամների թիւը կազմում է 10 մարդ:

Յանձնաժողովում յայտնուել է նոր նախարարական պաշտօն՝ ներքին շուկաների, տեղեկատուութեան, տեղեկատուական-հաղորդակցման տեխնոլոգիաների հարցերով նախարարի պաշտօնը: Այդ զբաղեցրել է Հայաստանի էկոնոմիկայի նախկին փոխնախարար Կարինէ Մինասեանը:

## Ըստ Նախարար Էդուարդ Նալբանդեանի

*Շարունակուած էջ 1-էն*

նութիւնը իրականացուցած Օսմանեան Կայսրութեան ժառանգորդը:

«Դա տարօրինակ է: Թէեւ տարօրինակ կը լինէր տրամաբանութիւն փնտռել Թուրքիայի հռետորութեան մէջ»,-դիտել տուաւ նախարարը՝ աւելցնելով, որ այլ հարցերով եւս թրքական կողմը նմանատիպ «տրամաբանութիւն» կը ցուցաբերէ, ինչ որ կը հանգեցնէ խնդիրներու, նաեւ այլ երկիրներու հետ:

Նախարար Նալբանդեան շեշտեց որ, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ աշխատանքը ամսաթիւերով կախուած չէ:

Պատասխանելով այն հարցին, թէ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը նշուեցաւ մեծ թիւով միջոցառումներով եւ կը շարունակուի՞ արդեօք աշխատանքը նոյն թափով, արտաքին գործոց նախարարը պատասխանեց,-«Հետեւողական աշխատանքը ամսաթիւերու հետ չէ կապուած: Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ ջանքերը կը շարունակուեն»:

## Արդարութեան Քայլարշաւը՝ Ապրիլ 24ին

*Շարունակուած էջ 1-էն*

Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Եկեղեցի
Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն
Ռամկավար Ազատական Կուսակցութիւն
Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն
Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն
Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջան
Հայ Օգնութեան Միութեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջան
Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն
Ամերիկայի Հայկական Համագումար
Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբ
Ամերիկայի Հայկական Խորհուրդ
Հայկական Իրաւանց Խորհուրդ
Հայկական Իրաւաբանական Միութիւն
Պոլսահայ Միութիւն

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
# ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՏԱՐԱԿԱՐԾԻՔ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ



*Միջին Արեւելքէն եւ Ափրիկէէն Եւրոպա խուժող գաղթականներու մեծ հոսքը՝ խորապէս կը մտահոգէ եւ օրէ օր աւելի սուր բնոյթ ստացող երեւոյթ մը կը ստանայ: Այս իրողութեան պատճառով կարգ մը երկիրներ ուժգնօրէն փակած են իրենց սահմանադուռը: Իսկ ուրիշներ՝ մտահոգիչ վերապահութիւն մը ունին:*

*Շուէտի մէջ ներքին գործոց նախարար Անտերս Ուկէմանն - ըսաւ, թէ՝ անցեալ տարի 80,000 գաղթականներ քաղաքական ապաստանեալի իրաւունք խնդրած են: Արդարեւ անոնք իրենց երկիրներու (Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէ) մէջ տիրող սովի եւ պատերազմական վիճակի պատճառով ներգաղթած ըլլալով հանդերձ ներկայիս վտարումի ենթակայ են:*

*Տանիմարքայի օրէնսդիր ժողովը այս կապակցութեամբ բանաձեւ մը որդեգրելով որոշած է չի քաջալերել եւ ապաստան չշնորհել գաղթականներուն: Նաեւ վիճայարուց որոշում մըն ալ քուէարկած են որով 1450 տոլարէն աւելի դրամ կամ ոսկեղէն ունեցողները պիտի հարկադրուին զանոնք գրաւման տակ պահել (ի բաց առեալ ամուսնական մատանիներէն) զանոնք յատկացնելու համար որպէս նպաստ տեղաւորման ծախսերուն:*

*Տանիմարքայի այս դիրքորոշումը խոր ընդվզում յառաջացուց մարդկային իրաւունքներու խմբակցութիւններու եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Պան Քի Մունի մօտ:*

*Արդարեւ, մօտաւոր անցեալին գաղթականները ողջունող երկիրները ներկայիս մեծ մարտահրաւէրներու առջեւ կը գտնուին: Օրինակ Շուէտը որ 9.1 միլիոն բնակիչ ունի իր մէջ կը պարփակէ 2015ին ժամանած 163,000 գաղթականներ: Անոնք աւելի շատ օգնութեան կարիքն ունին իսկ եւրոպական երկիրներու մօտ կը պակսի ներդաշնակ ու համաչափ գործակցութիւնը գաղթականներու հարցին հանդէպ:*

*Ամիսներէ ի վեր Եւրոպայի ղեկավարները վէճի մէջ են, թէ ինչպէս դիմակայեն վերջ չունեցող գաղթականներու հոսքը: Անոնք սկսած են մերթ ընդ մերթ, միասնաբար պատգամներ յղել գաղթականներուն, յայտնելով թէ հարցը այդքան ալ հեշտ պիտի չըլլայ, այնպէս ինչպէս որ իրենք կը կարծեն:*

*Այս կապակցութեամբ Յունաստան խստօրէն քննադատուած էր Եւրոպական Յանձնաժողովին կողմէ, քանի որ «լրջօրէն անփոյթ» գտնուած էր իր պարտաւորութիւններուն հանդէպ եւ չէր կրցած հակակշռել Եւրոպայի հետ իր արտաքին սահմանները, որ կը կոչուի «Շէնչէնի գօտի»: (Senhenge Zone), առանց անցագրի գօտի: Իր հերթին Յունաստանի կառավարութիւնն ալ իր պատասխանին մէջ դատապարտած է «մեղադրանքի խաղ»ը եւ քննադատած է հասկացողութեան պակասը:*

### ԱՒԵԼԻ ՔԱՆ 1 ՄԻԼԻՈՆ ԳԱՂԹԱԿԱՆ 2015ԻՆ

*Միայն անցեալ տարի աւելի քան 1 միլիոն գաղթականներ ժամանած են Եւրոպա: Պաղ օդն ու խիստ ձմեռը մեծապէս դժուարացուցած են անցնիլը, զայն հասցնելով առաւել վտանգաւոր վիճակի:*

*Միացեալ Ազգերու Կազմակերպութեան համաձայն տարեսկիզբէն անօթութենէն Եւրոպա հասնողներուն թիւը կը գնահատուի 46,000: Եւրոպական երկիրներու միջեւ ռազմագիտական միացեալ հասկացողութեան պակասին պատճառով է որ իւրաքանչիւր երկիր կը հարկադրուի իր ուրոյն օրէնքները ծանօթացնելու ժամանողներուն:*

*Վերջերս Գերմանիան խստացուց քաղաքական ապաստանեալի օրէնքները իր սահմանները հասած գաղթականներուն: Յիշեցնենք որ կառավարիչ Անկելա Մերքեր բերանացի յայտարարած է թէ ինք կ՚ողջունէ գաղթականներու մուտքը եւ թէ թիւի համար սահման չէ դրած:*

*Միջազգային Ներման Կազմակերպութեան գաղթականներու իրաւուքններու խորհրդական Մատլէն Սէյտիձն ազդարարեց թէ նման չափանիշով ներհոսքը կրնայ վտանգաւոր հետեւանքներու դուռ բանալ: Եւրոպայի մէջ գաղթականներու եւ քաղաքական ապաստանեալ խնդրողներու հանդէպ ներկայի իրավիճակը «երբեք այսքան մութ չէ եղած» ըսաւ ան:*

*Ղեկավարները չեն փափաքիր տարի մը եւս նման մակարդակով գաղթականներ ընդունիլ, քանի որ չեն գիտեր թէ ինչպիսի ապահովական միջոցներով պիտի պաշտպանեն իրենց հաստատութիւնները:*

## Հրապարակային Քննարկում

Կազմակերպութեամբ՝
ՍԴՀԿ «Փարամազ» Մասնաճիւղի

Նիւթ՝
**Փարամազ Եւ Հրանդ Տինք**
Օսմանեան Կայսրութեան
Եւ Թուրքիոյ Հանրապետութեան
Ժողովրդականացման Առաքեալները

Կը Զեկուցէ՝
Յարութ Տէր-Դաւիթեան

Տեղի Կ՚ունենայ Հինգշաբթի, Փետրուար 25, 2016-ի
Երեկոյեան ժամը 8-ին, Փասատինայի ՀՄՄ-ի
«Կարօ Սողանալեան» սրահէն ներս

1060 N. Allen Ave. Pasadena Ca. 91104



# ՍԱՐՖ-Ի ՓԵՏՐՈՒԱՐ 21-Ի ԹԵԼԵԹՈՆԸ ԿՈՏՐՈՒԱԾ ՍԿԱՒԱՌԱԿ Թ՞Է ԿՏՐՈՒԱԾ ՄՐՋԱՆԻՇ

ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ

Ներսէս՝ Սուրիահայ արհեստավարժ մասնագէտ մըն է: Կարող եւ յարգուած: Վկայեալ Սուրիոյ համալսարաններէն, տարիներէ իվեր վարած է յաջող ատամնաբուժական դարմանատուն մը Հալէպի մէջ մինչեւ 2011, երբ Սուրիոյ ապահովութեան իրավիճակը վատթարանալով երկիրը մատնեց արիւնալի ճգնաժամի մը: Դարմանատունը կը գտնուի Նոր Գիւղի կիսաքանդ եւ վտանգաւոր շրջանին մէջ եւ այդ պատճառով աշխատանքը արմատապէս կրճատուած է: Ներսէս նուիրուած եւ ծառայասէր զաւակն է իր ժողովուրդին, աշխոյժ մէկ անդամը համայնքին, հաւատարիմ իր ինքնութեան եւ արմատներուն, ինչպէս նաեւ ազգային պայքարի ճանապարհին՝ ճշմարտութեան եւ արդարութեան անխախտ պահանջատէրը:

Ներսէս վճռած է անսասան պահել հայ գաղութի հերոսական ու պատմական ներկայութիւնը Սուրիոյ մէջ եւ շարունակել ապրիլ խաղաղ եւ ներդաշնակ՝ Սուրիոյ արաբ հարեւաններուն հետ, որոնց ասպնջական նախահայրերը ջերմագին եւ սիրալիր կերպով ընդունեցին Հայոց Ցեղասպանութենէն վերապրողները, անոնց ներշնչելով գոյատեւելու յոյս, բարգաւաճելու հնարաւորութիւն եւ ազատօրէն պաշտելու իրաւունք: Ներսէս, Սուրիահայ համայնքի բոլոր զաւակներու նման կը շարունակէ տառապիլ, երկրին մէջ տիրող եւ շարունակուող արիւնահեղութեան, աւերումի, մահուան սպառնալիքի, արժանավայել կեանքի մը ամէնատարրական պայմաններու չգոյութեան պատճառաւ:

Յակոբ նոյնպէս մասնագէտ ատամնաբոյժ մըն է՝ շրջանաւարտ Սուրիոյ համալսարաններէն: Սուրիոյ արիւնալի հակամարտութիւններու սկիզբը, ան ապաստան գտաւ վայրի մը մէջ, ուր տասնամեակներ շարունակ անհայրենիք սփիւռքահայը ձգտած եւ երազած է տեղափոխուիլ եւ բնակութիւն հաստատել՝ հայրենիք - Մայր Հայաստան: Յակոբ եւ իր երիտասարդ ընտանիքը ջերմօրէն կը փափաքին իրենց խարիսխը գետեղել հայրենիքի մէջ, հաստատուիլ այնտեղ, եւ իրենց արմատները խորացնել իրենց նախահայրերու հողին վրայ: Յակոբ իր մասնագիտութիւնը կը վարէ՝ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան նախաձեռնութիւնը եղող դարմանատան մը մէջ որ կը ծառայէ հայրենիքի կարիքաւորներու ինչպէս նաեւ Հայաստան ապաստանած Սուրիահայ գաղթականներու:

Յակոբ վճռած է հաստատուիլ Հայաստանի մէջ, հակառակ երկրի տնտեսական տագնապին եւ հնարաւորութիւններու սակաւութեան: Աշխատասէր, ստեղծագործ, կայտառ եւ արդիւնաւէտ՝ Յակոբ կարիքը ունի եւ արժանի է ամէն օժանդակութեան, ունենալու երդիք մը գլխուն վրայ, որ կարենայ կոչել իր հարազատ ծիծեռնակի բոյնը հայրենիքի մէջ:

Սուրիահայ գաղութին վիճակուած ազգային աղէտի մը ենթարկուած փորձառութեան դիմաց ցցուող, համահայկական եւ ազգային ռազմավարութեան մը բացակայութեան՝ անոնց օժանդակելու հսկայ բեռը վիճակուած է մեր ժողովուրդին որ կոչուած է իր լաւագոյնը ընել օգնութեան ձեռքը երկարելու Սուրիահայ Ներսէսներուն եւ Յակոբներուն՝ Սուրիոյ կամ Մայր Հայրենիքի մէջ: Թէեւ ուշ բայց ոչ ուշացած, հարկ է կանխել եւ կասեցնել՝ տառապող Սուրիահայ զանգուածին շարունակուող անդամահատութիւնը ուղղուած Արեւմուտքի հալեցնող կաթսան կամ աշխարհի մութ ու անյայտ անծանօթ տարածքները:

Ոմանք գուցէ յոգնած են լսելու մեր ուղղած օգնութեան եւ աջակցութեան շարունակուող դիմումներն ու աղերսները՝ զօրակցելու Սուրիոյ եւ Հայրենիքի մէջ գտնուող տագնապահար Սուրիահայերուն: Անոնք կրնան այս աղերսները կոչել կոտրուած սկաւառակ, չափազանցուած աղէտ՝ հեռու ազգային առաջնահերթութիւններէ: Բայց ես կը ճանչնամ մեր ժողովուրդը,

Տար.ը էջ 19

# ՀՐԱՉ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԱՊՐՈՂ ՄՇԱԿՈՅԹ ԴԱՐՁՆԵԼ



«Հաւաքի հիմնական նպատակն էր արեւմտահայերէնը ոչ թէ միայն իբր լեզու դասաւանդելու, կամ անոր ուսումնական տեսանկիւնի հարցերուն նայելու, այլ յատկապէս խօսելու եւ քննարկելու արեւմտահայերէնով մտածելու եւ ստեղծագործելու խնդիրներուն մասին, այսինքն կարճ ասած, քննարկելու արեւմտահայ մշակոյթ ստեղծելու եւ զարգացնելու խնդիրները», - «Արեւելք»ին ըսաւ Օքսֆորտ համալսարանի դասախօս՝ Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան:

Ան ըսաւ, թէ՝ իբր կազմակերպիչ գոհ է արեւմտահայերէնի խնդիրներուն նուիրուած համաժողով-աշխատանոցէն, նշելով նաեւ, որ ժողովին մասնակցած են տարբեր երկիրներէ Օքսֆորտ ժամանած 30 մասնակիցներ, որոնք բաժնուած եղած են 3 դասակարգերու: Առաջինը՝ այսօրուայ մեր սփիւռքի մէջ արեւմտահայերէնով ստեղծագործող գրողներ: Երկրորդ՝ դասակարգի մէջ էին թերթերու խմբագիրներ եւ երրորդը՝ հրատարակիչներ եւ հրատարակչատուներու ներկայացուցիչներ: Չիլինկիրեանի ըսելով՝ այս երեք խումբերը իրարու կապուած են եւ չի բաւեր լեզուն օգտագործել, ստեղծել եւ զարգացնել, այլ պէտք ունինք մամուլին, որպէսզի տարածուի, զարգանայ լեզուն, եւ մանաւանդ նորատիպ ստեծագործութիւնները հրատարկուելէ բացի տեղ հասնին:

Պատասխանելով «Արեւելք»ի հարցումին այն մասին, թէ՝ սոյն հաւաքին կազմակերպիչ մարմինը ինչ ակնկալիքներ ունէր նման ժողովէ մը, Չիլինկիրեան յարեց. «Հաւաքը գիտաժողով մը չէր, չնայած կարելի է նաեւ գիտաժողով կոչել զայն, բայց յատկապէս շեշտը դրուած է աշխատանոցի վրայ: Տեղի ունեցածը աշխատանոց մըն էր, որպէսզի այնտեղ ազատօրէն նիւթերը լայն ձեւով քննարկուին, վէճեր ըլլան իրարու հետ, գաղափարներու, առաջարկներու փոխանցում ըլլայ եւ այլն: Մեր հիմնական նպատակը այն է, որ փորձեցինք մեր այս աշխատանոցի վերջաւորութեան 5-6 հիմնական խնդիրներ ճշդել, թէ այսօր, 21-րդ դարու սկիզբը արեւմտահայերէնի ներկային եւ ապագային հետ կապուած ի՞նչ հիմնական խնդիրներ ունինք, երկրորդ՝ ինչպիսի միջոցներ, լուծումներ կան այդ խնդիրները դիմագրաւելու, այդ մարտահրաւէրները առնելու եւ գործի լծուելու: Անշուշտ այս բոլորը նախնական քայլեր են եւ գիտենք, որ խնդիրները բարդ են, բազմաթիւ են, լուծումները բարդ են: Այս բոլորը հսկայական միջոցներ կը պահանջեն»:

Դոկտ. Չիլինկիրեան նաեւ նշեց. «Մեր նպատակն է այս քննարկումներուն արդիւնքը ներկայացնել սփիւռքի եւ Հայաստանի տարբեր կազմակերպութիւններուն, տարբեր ղեկավարութիւններու եւ ընդհանուր մեր հանրութեան, որպէսզի քննարկումները շարունակուին այդ մասին աւելի խօսուի եւ ընդհանուր լուծումները դառնան խթան՝ արեւմտահայերէն մշակոյթի պահպանման եւ զարգացման համար»:

Չիլինկիրեանի կարծիքով բաւարար չէ լեզուն պահպանելը, այլ ստեղծուած մշակոյթը պէտք է ապրող էութիւն եւ իրականութիւն դարձնել մեր առօրեայ կեանքին մէջ, աւելցնելով, որ «ոչ թէ պէտք է պահպանենք ինչ որ կատարուած է անցեալին եւ փոխանցուած է մեզի, այլ ամենակարեւորը՝ արեւմտահայերէնը եւ արեւմտահայ մշակոյթը մեր առօրեային մէջ պէտք է տեղ ունենայ, որպէսզի կարելի ըլլայ զայն զարգացնել եւ տանիլ դէպի ապագայ»:

Չիլինկիրեան, գրոյցի աւարտին դրական շեշտադրումներ կատարելով, ըսաւ. -«Մենք եթէ այսօր, ցեղասպանութենէն 100 տարի ետք, կը շարունակենք մեր երթը, ուրեմն յաղթական ենք, այն իմաստով որ կ'ապրինք, կը ստեղծագործենք, լաւ դիրքերու հասած ենք, լաւ պայմաններ ունինք մեր համայնքային կեանքին մէջ, բայց

Տար.ը էջ 19



# «ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԺՈՂՈՎԸ
## «ՀԱՅԵՐԸ 2115 ԻՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՅՑԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՒ

*«Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութիւնը Երեքշաբթի Յունուար 26-ին առաջին անգամ ըլլալով համացանցի միջոցաւ տեսաժողով մը կազմակերպած էր միաժամանակ երեք աշխարհամասերու քաղաքներու միջեւ՝ Լոնտոն, Լոս Անճելըս եւ Երեւան, վիճարկումի նոր ձեւաչափ մը՝ քննարկելու «Կիւլպէնկեան Հիմնարկութեան» Լիզպոնի մէջ 2014 Հոկտեմբերին «Հայերը 2115ին. Ռազմավարական ուղղութիւններ 21րդ դարուն համար» գիտաժողովի զեկոյցին հրապարակման առթիւ:*

*Յիշեցնենք, թէ 2014 Հոկտեմբեր 13-14ին Հիմնարկութիւնը կազմակերպած էր երկօրեայ բացառիկ գիտաժողով մը՝ քննարկելու համար հայ ժողովուրդի ապագայի հեռանկարները համաշխարհային դիտանկիւնէն, որուն մասնակցած էին աշխարհասփիւռ հայ համայնքը ներկայացնող 40 մտաւորականներ եւ ազգային գործիչներ՝ տարբեր երկիրներէ: Հրաւիրուած էին նաեւ օտար փորձագէտներ: Գիտաժողովէն տարի մը ետք 2016 Յունուար 25-ին հրապարակուեցաւ այդ աշխատանքներէն բխած զեկոյցին բովանդակութիւնը եւ այդ առիթով էր որ կազմակերպուեցաւ երեք երկիրներու միջեւ համացանցային տեսաժողովը:*

*Սոյն նախաձեռնութեան բացումը կատարեց «Կիւլպէնկեան»ի հոգաբարձու մարմնի անդամ Մարթին Եսայեան (Գալուստ Կիւլպէնկեանի թոռը): Ան ըսաւ թէ արդէն այս հեռահա - ղորդակցական ծրագիրը բաւական շարժում ստեղծած եւ շշուկներու առիթ տուած է եւ կայքէջերու վրայ նախապէս դիտարկումներ ու նշումներ եղած են, յայտնուած են կարծիքներ:*

*Մ. Եսայեան շարունակեց ըսելով, որ երեւոյթը ճարտարագիտական գետնի վրայ նորոյթ մըն է, որու միջոցաւ կարելի կ՚ըլլայ տարբեր կեդրոններու մէջ մտաւորականներէ բաղկացած խումբեր կազմել, որոնք յետոյ հրաւիրեալներու եւ համացանցէն ստացուած հարցումներու կամ դիտարկումներու հիման վրայ քննարկումները պիտի ընդլայնեն: Պրն. Եսայեան նշեց թէ՝ «Մենք արդէն բնականաբար միջազգայնացած ժողովուրդ ենք եւ պայմաններու բերումով է որ այդպէս եղած ենք եւ առ այդ այժմ պէտք է ընդհանրական ձեւով մտածել, ընդհանրական հեռանկարներ ունենալ եւ մասնակցիլ նման հանդիպումներու կամ նախաձեռնութիւններու, որպէսզի կարելի ըլլայ աշխարհի տարբեր անկիւններէ ստացուած տպաւորութիւններու լոյսին տակ հարստացնել մեր խորհրդածութիւնները»:*

*Այնուհետեւ խօսքը փոխանցեց Ռազմիկ Փանոսեանին, Կիւլպէնկեանի Հայկական համայնքներու բաժնի տնօրէնին, որ նախաձեռնողն էր «Հայերը 2115ին. Ռազմավարական ուղղութիւններ 21րդ դարուն համար» խորագրեալ ծրագրին: Վերջինս նախ օրինակներ բերաւ համացանցի վրայ այս նիւթին շուրջ կատարուած կարգ մը նշումներէ, ինչպէս՝ «մէկը հարց կու տայ թէ որոնք են Սփիւռքի մէջ գործօն հաստատութիւնները. միւսը կը խօսի Հայաստանի նկատմամբ մեր իտէալականացուած երեւակայութեան մասին, ուրիշ մը կ՚ըսէ թէ պէտք է ժողովուրդին խօսքը մտիկ ընել, որովհետեւ Հայաստանի ղեկավարները չեն որ երկրին իրական պատկերը կը ներկայացնեն, եւայլն, եւայլն»: Փանոսեան այնուհետեւ ներկայացուց «Հայերը 2115ին. Ռազմավարական ուղղութիւններ 21րդ դարուն համար» զեկոյցին ընդհանուր պատկերը եւ խօսեցաւ տարբեր կարելիութիւններու մասին, ինչպէս՝ Հայաստանի վրայ Ռուսաստանի ազդեցութեան հզօրացումը եւ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղութիւն դրութեան» հաստատումը, Թուրքիոյ մէջ ընթացող զարգացումները ընդհանրապէս քաղաքացիական միաւորներու կողմէ ժողովրդավարութեան հետապնդման լոյսին տակ՝ յատկապէս ցեղասպանութեան նիւթին վերաբերեալ, եւ այս՝ հակառակ կառավարութեան ժխտողական դիրքորոշման, Արցախի եւ Ատրպէյճանի միջեւ պատերազմական վիճակը եւ անոր ոչ դրական հետեւանքները, Միջին Արեւելքի վտանգաւոր կացութիւնը եւ վերջապէս հայ ժողովուրդին դէպի Արեւմուտք գաղթը:*

*Ռազմիկ Փանոսեան ապա խօսեցաւ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու մասին, զորս պէտք է վերասահմանել, որպէսզի կարելի ըլլայ հայութեան ինքնութեան ապագայի պատկերը ձեւակերպել: Ան անդրադարձաւ նաեւ Թուրքիոյ, Վրաստանի եւ Ատրպէյճանի հետ նոր քաղաքականութեան մշակման հարցին: Յետոյ խօսքը փոխանցուեցաւ Լոս Անճելըսի մէջ հաւաքուած կորիզին, ուր գրուցակիցներն էին Սալբի Ղազարեան (Նախկին «Սիվիլնէթ»ի գլխաւոր խմբագիր եւ այժմ Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանի հայագիտական ամպիոնի տնօրէն) եւ Րաֆֆի Արտհալճեան: Ս. Ղազարեան ըսաւ թէ Սփիւռքը պէտք է արդէն ձեւով մը վերասահմանուի, որովհետեւ այսօր ան նո՛ր պատկեր մը ստացած է, նկատի ունենալով որ համայնքային հաստատութիւններու կողքին կան առանձին անձեր որոնք կարեւոր դերակատարութիւն ունին ու մեծ գործունէութիւն կը ծաւալեն եւ այս երկուքը միասնաբար կը կազմեն ներկայի ընդհանուր պատկերը: «Այսօր Սփիւռքը այլեւս միատարր մարմին մը չէ, այլ՝ կան սփիւռքներ որոնք այնքա՜ն տեղայնացած դիմագիծեր ունին, զորս կարելի չէ մէկ պարունակի մէջ տեղադրել», նշեց բանախօսը եւ աւելցուց թէ ներկայիս Հայաստանի մէջ գոյութիւն ունի պետութենէ անջատ երիտասարդական շարժում մը, որ աւանդական կառոյցներէն անկախ է: «Այդ երիտասարդները լաւապէս կը տիրապետեն ճարտարագիտական արուեստին եւ շատ գործօն են», աւելցուց Սալբի Ղազարեան:*

*Րաֆֆի Արտհալճեան շարունակելով երիտասարդներուն առնչուող նիւթին շուրջ քննարկումը, -ըսաւ թէ՝ այժմ մանր խմբակներու ցանց մըն է որ կը գործէ ապակեդրոնացած եւ անդրազգային ձեւով: Ան ընդգծեց թէ այսօր ոչ միայն հայութեան, այլ ընդհանրապէս մարդկութեան առջեւ ծառացած խնդիրները պէտք է լուծուին ոչ միայն կառավարութիւններու եւ պետութիւններու միջոցաւ, այլ նաեւ այն անձերու եւ հաստատութիւններու կողմէ, որոնք հսկայական գումարներ կը յատկացնեն ու ներդրումներ կը կատարեն: Ան յիշեց Զուգըրմանի, Պիլ Կէյթի, բայց նաեւ Վարդանեանի կամ Սամ Սիմոնեանի նման անհատներու անունները, որոնց նախաձեռնութիւնները յետագային շատ կարեւոր ազդեցութիւններ պիտի ունենան: Ր. Արտհալճեան արծարծեց նաեւ հետաքրքրական այն գաղափարը, թէ աշխարհի տարբեր անկիւններու մէջ արդէն իսկ հաստատուած Սփիւռքի «մարմին» գոյութիւն ունի եւ կը մնայ անոր անդամներուն միջեւ կապեր հաստատել եւ աշխատանքը յառաջացնել: Ան համացանցային պատկեր մը տալով նշեց թէ արդէն «Hardware»ը գոյութիւն ունի եւ պէտք է «Software» մը կազմել եւ ծրագրել: Յայտնենք թէ Համալսարանի սրահին մէջ շուրջ 50 հոգի հաւաքուած էին:*

*Երեւանի մէջ սոյն համացանցային զրոյցին չորս հոգինոց խումբին հաղորդավարն էր Արմէն Տէր Կիւրեղեան, որ ըսելով թէ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ պէտք է կայուն կապ մը հաստատել, խօսեցաւ նաեւ Հայաստան-Պարսկաստան յարաբերութիւններու ամրապնդման անհրաժեշտութեան մասին: Իսկ Պետական համալսարանի դասախօս Մարք Գրիգորեան նշեց, թէ՝ Թուրքիան Հայաստանի դրացի երկիր մըն է եւ անցեալին (2000 թուականին) Հայաստան-Թուրքիա կապերու մերձեցման գծով խումբեր կազմուած էին, որոնց շնորհիւ է որ հոն քաղաքացիական կազմակերպութիւններ սկսան առանց վախի արծարծել մինչ այդ «թապու» նկատուող Հայոց Ցեղասպանութեան նիւթը: Իր կարգին Սամ Սամուէլեան ըսաւ թէ «ընդհանրապէս մեր մօտ գոյութիւն ունի զգացական դրամագլուխ մը Հայաստանի նկատմամբ», բայց պէտք է Հայրենիքի հետ յարաբերութիւնները աւելի զարգացնել, որովհետեւ տակաւին գրեթէ հայ աշխարհագրիւ գանդ-*




*Շար.ը էջ 17*



## ԼԻԲԱՆԱՆ

# ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ «ԳՄԲԷԹ ԱՐԵԳ» ՆՈՐԱՏԻՊԻՆ ԵՒ ՄԵԾԱՐՈՒՄ ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ




*Ուրբաթ, 29 Յունուար 2016-ի երեկոյեան, Հ.Կ.Բ.Մ.-ի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի «Արմէն եւ Բերսաբէ Ճէրէճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ գրական-մշակութային պատկառելի ձեռնարկ մը՝ կատարելու շնորհահանդէսը Պէպօ Սիմոնեանի «Գմբէթ Արեգ» նորատիպին եւ այս առիթով յուշածելու անթառամ յիշատակը բանաստեղծին:*

*Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպութեամբ իրագործուած ձեռնարկին ներկաներէն էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Արամ Ա.ի ներկայացուցիչ՝ Գեր. Նորայր Եպս. Աշըգեան, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան ներկայացուցիչ՝ Գերապատիւ Հայր Խաչիկ Գույումճեան, Վեր. Սողոմոն Քիլաղպեան, պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Լիբա-նանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան եւ անդամներ, Պէյրութի քաղաքա-պետութեան անդամ Արամ Մալեան» լիբանանահայ մտաւորականութեան մեծ թիւով ներկայա-ցուցիչներ, գրասէրներ, նախկին սահակեանցիներ, բարեկամներ ու հայրենակիցներ:*

Եթէ Գէորգ մինչեւ այսօր տակաւին կը յիշէ «Խաֆսան», բայց նաեւ 1983ի Ապրիլի 24ին, երբ Գամիշլիէն, Ռասիւլ Այնէն, Հասաքէէն մի քանի հարիւր հոգի, հոգեւոր հովիւներու առաջնորդութեամբ, Սուրբ Պատարագ եւ Հոգեհանգիստի արարողութիւն տեղի ունեցաւ բոլոր հայ զոհուածներուն այդ փոս-քարայրին մէջ: «Կեանքիս մէջ անմոռանալի եւ եզակի էր այդ օրը...»: Որովհետեւ հոն՝ «անյուշ» Խաֆսային մէջ՝ Գէորգը եւ «մենք հայերս շատ աւելի լաւ կ՛ըմբռնենք եւ կը զգանք ողջակիզումի զոհերուն ցաւն ու տանջանքը, քանի որ նախադէպը ապրած ենք ազգովին...»: Իսկ «Նախադէպը» պատմութիւնն է որ կը կրկնուի:




Իսկ այսօրը՝...:Գէորգն է դարձեալ: «Այժմ, այս օրերուն, այս շրջանը ինկած է հաւատադրժողական զինեալ խմբաւորումներու տիրապետութեան տակ ցնոր տնօրինութիւն...»: Եւ այս «տիրապետութեան» տակ ականատես ենք թէ պատմութիւնը ինչպէս՝ ինքզինք կը կրկնէ...: Եւ թէ պատմութեան հոլովոյթները ինչպէս կապուած են մէկը միւսին...: Եւ ցեղասպանութիւնը եւ ոճրագործութիւնը կը շարունակուի...: Եւ նոյն այս շրջան(ներուն) մէջ...: Եւ նոյնինքն այսօրուայ Սուրիական եւ Իրաքեան թոհ ու բոհին մէջ...:

Եւ դարձեալ Տոնալտ Պլոքսհամն է...: «Ոճիրը նոյնն է, գործադրողները միայն տարբեր...»:

Եւ Տոնալտի հայեցակէտով՝ ցեղասպանութիւնը՝ որ մարդկութեան հանդէպ ոճրագործութիւն է՝ կարելի չէ զայն սերտել առանց քննական յետադարձ ակնարկ-կապ մը ստեղծելով անցեալի պատահածին՝ եւ բերել զայն ներկային ու տակաւին վաղուան օրուանը...: Եւ այս, ցեղասպանութեան եւ մարդկութեան հանդէպ ոճրագործու-

Շար.ը էջ 19

THE NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH (NAASR) AND CO-SPONSORS
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY
HAMAZKAYIN JEMARAN ASSOCIATION • TEKEYAN CULTURAL ASSOCIATION
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION • ARARAT-ESKIJIAN MUSEUM
PRESENT

GOODBYE, ANTOURA:
A MEMOIR OF THE ARMENIAN GENOCIDE




Featuring presentations by

Dr. Richard G. Hovannisian
*Professor Emeritus of Modern Armenian and Near Eastern History, UCLA, and Adjunct Professor of History, USC*

Maurice Missak Kelechian
*Independent Researcher*

Houry Panian Boyamian
*Principal, St. Stephen's Armenian Elementary School, Watertown, MA, and daughter of author Karnig Panian*

and by video

Prof. Keith D. Watenpaugh
*University of California, Davis*

Master of Ceremonies
*Dr. Viken Yacoubian, Professor, Woodbury University, Hamazkayin Central Executive Board*

**Thursday, February 18, 2016, 7:30 p.m.**

Armenian Society of Los Angeles Main Hall
117 S. Louise Street, Glendale, CA 91205

Born in the Anatolian village of Gurin, Karnig Panian was only five years old when World War I began. Four years later, American aid workers found him at an orphanage in Antoura, Lebanon. He was among nearly 1,000 Armenian and 400 Kurdish children who had been abandoned by the Turkish administrators, left to survive at the orphanage without adult care. He grew up to become an educator and vice-principal at Djemaran, the Armenian Lyceum, based in Beirut, Lebanon.

His memoir, *Goodbye, Antoura* (Stanford Univ. Press, 2015), offers the extraordinary story of what he endured in those years—as his people were deported from their Armenian community, as his family died in a refugee camp in the deserts of Syria, as he survived hunger and mistreatment in the orphanage. The Antoura orphanage was another project of the Armenian Genocide: its administrators, some benign and some cruel, sought to transform the children into Turks by changing their Armenian names, forcing them to speak Turkish, and erasing their history.

Panian paints a painfully rich and detailed picture of the lives and agency of Armenian orphans during the darkest days of World War I. Ultimately, Karnig Panian survived the Armenian Genocide and the deprivations that followed. *Goodbye, Antoura* assures us of how humanity, once denied, can be again reclaimed.

*This event is free and open to the public.*
*Goodbye, Antoura* will be available for purchase and signing after the program.
*Parking available in public lot at 120 S. Maryland Ave., one block west of Louise St.*

# ԴՈԿՏՈՐ ԳԷՈՐԳ ԽՐԼՈԲԵԱՆ
## ՄԱՀՈՒԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՒ

«Դէ գիտէք ի՞նչ, եկէ՛ք ընդունենք, որ շատ բան չէր մեր արածը. ասենք պարզապէս, թէ ի՞նչ որ ժողովուրդէն է եկել, ժողովուրդն է ապրել ու ստեղծել, ներկայացրինք ժողովուրդին...»:

Գէորգ Խրլոբեան

***ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ***



*Մշակն է իր բառացի իմաստով համեստ պարզ եւ իրական:*

*Ուսուցիչն է խոնարհ, մարդակերտը, հոգիներու եւ մտքերու դարբինը:*

*Մարդն է պարկեշտ, չափաւոր հանդարտաբարոյ եւ խաղաղ :*

*Այն համեստ մեծերէն մէկը, Դոկտ. Գէորգ Խրլոբեան, որ նուաճած էր բարձունքներ եւ գրաւած՝ հոգիներ, մշակած էր մտքեր եւ դարբնած նկարագրեր: Սակայն մահը անողորմ է մեծն ու փոքրը, արժանին եւ անարժանը բոլորը կը հաւաքէ ու կը տանի : Այսպէս նաեւ Դոկտ. Գէորգ Խրլոբեան ինկաւ հիւանդութեան ճիրաններուն մէջ, սակայն հիւանդութիւնը իր համեստութիւնն ու պարզութիւնը չկրցաւ նուաճել, ան մնաց իր մտային բարձունքին վրայ, միշտ պայծառ, միշտ զգօն եւ վեհ՝ գրիչով, մտածումներով ու տրամադրութեամբ:*

*Սակայն մահուան գերանդին անողոք է, զինք ալ կլանեց եւ ֆիզիքապէս առաւ ու տարաւ:*

*Գէորգ Խրլոբեանն է՝*

*Ծնած է Հալէպ՝ մայր գաղութի մէջ, քսաներորդ դարու սկիզբները, հազիւ տասնամեակ մը ետք հայոց Ջարդերէն, երբ տակաւին նոր կը ստեղծուէր հայկական գաղութները: Փիւնիկի մը պէս մոխիրներէն յառնեցեալ հայ մարդը կորսնցուցած իր ունեցուածքն ու հոգեմտաւոր բոլոր արժէքները, բոլորուած էր իր եկեղեցւոյ ակումբի ու դպրոցի շուրջ, կը հաստատէր հիմքը նորաստեղծ հայկական սփիւռքին, հացէն առաջ մտածելով հայ դպրոցի կառուցման մասին, ընտանիքէն առաջ հիմը դնելով եկեղեցւոյ, որովհետեւ Ջարդէն ճողոպրած մարդը կը հաւատար որ ազգային ինքնութիւնը կը զօրանար ու կը պահպանուէր կրօնական ինքնութեամբ եւ ինչու չէ նաեւ զուգահեռ :*

*Այս էր այդ օրերուն ժողովուրդի մտայնութիւնը, այս էր Գէորգի շրջապատին եւ ծնողներուն մտայնութիւնը, որոնք այդ օրերուն իրենց համայնքն ու եկեղեցին ղեկավարող դիրքերու վրայ կը գտնուէին ինչպէս՝ Կիլիկիոյ հողերէն սնունդ առած եւ Հալէպի մէջ նոր բոյն կազմած հայրը՝ Վերապատուելի Տիգրան Խրլոբեան, հայրենասէր եւ քրիստոնեավայել մարդը իր խօսքով ու գործով, նաեւ մօրենական մեծ հայրը Պատուելի Աւետիս Լոշխաճեան՝ մարդկային ազնուագոյն սկզբունքներու երկրպագու համեստ մարդու տիպար:*

*Այս մթնոլորտի մէջ է որ ծնաւ, սնաւ եւ հասակ առաւ Գէորգ: Ան իր առօրեայ սնունդին հետ նաեւ կը սնանէր կազմակերպչական աշխատանքներով եւ վերականգնման գործունէութեամբ գեղուն այդ մթնոլորտին մէջ, որ իր ֆիզիքական աճման առընթեր զինք կոփեց ու կերտեց որպէս կազմակերպչական հմտութեամբ զինուած եւ տարիքէն աւելի հասուն եւ իմաստուն երիտասարդ մը, ան ազգային փորձառութեան կողքին նաեւ ունէր օտարներու հետ չփուելու փորձառութիւնը, որովհետեւ նախակրթարան ուսումը իմմանուէլ վարժարանէն ստանալէ ետք, երկրորդականը յաճախեց Հալէպի Ամերիկեան քոլէճը, ուր ունէր ընկերային աշխուժ գործունէութիւն, որպէս ուսանողական միութեան եռանդուն անդամ՝ պատանի տարիքէն դրսեւորելով ընկերային եւ յարաբերական կեցուածք: Ամերիկեան գոլէճէն վկայուելով ան ուղղուեցաւ դէպի Հայաստան յագեցում տալու իր ուսումնատենչ տղու հոգիին. ան թողեց իր ծննդավայր Հալէպը եւ հետը առած միայն 18 ամեայ ուսանողի փորձառութիւնը ու ծնողներու օրհնութիւնը՝ հասաւ հայրենիք:*

*Հայաստանի մէջ տնտեսական եւ ընկերային դժուար ժամանակներ էին, Բ-Համշխարհային պատերազմի վաղորդայնն էր, ինչպէս աշխարհ Հայաստանն ալ առած էր պատերազմէն իր բաժինը, հայ ժողովուրդը լուրջ դժուարութիւններու դէմ յանդիման ձգելով, բայց Գէորգի ուսում ստանալու փափաքը, կամքը դարձուցած էր պողպատ. Ան կուրծք տուաւ ամէն տեսակի խոչընդոտներու, որովհետեւ ան սոսկ եկուոր ուսանող մը չէր, սփիւռքահայ սովորական ուսանող մը ըսնաւ չեղաւ, այլ ան եկաւ հայրենիք, եւ հայրենիքի սէրն ու անոր հանդէպ ունեցած նուիրումը զինք ագուցեց հայրենի հողին ու մարդուն եւ այնուհետեւ մխրճուեցաւ ուսման ընդերքը, լրջօրէն խորասուզուեցաւ իր նիւթի ոլորտներուն մէջ, շարունակեց, հասաւ բարձր դիրքերու՝ հայոց լեզուի, հոգեբանութեան եւ տրամաբանութեան մասնագիտութիւններու մէջ. 1951ին վկայուեցաւ ստանալով իր մագիստրոսական տիտղոսը, ապա արմատները աւելի խորացուց հայրենի հողին մէջ, ստացաւ իր դոկտորայի զոյգ տիտղոսները նոյն համալսարանէն 1960 եւ 1974 թուականներուն, 1965-1985 ան ուսանեցաւ եւ ուսումնասիրեց հայկական աստուածաբանութեան պատմութիւնը երանաշնորհ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս-ի հովանաւորութեամբ եւ հետեւաբար ստացաւ նաեւ Աստուածաբանութեան դոկտորայի տիտղոսը եւ այսպիսով պատուական տեղ գրաւեց հայրենի գիտնականներու փաղանգին մէջ: Գէորգ առաջին հիմնադիրներէն մէկը հանդիսացաւ Հայ ընկերային իմաստասիրութեան պատմութեան ուսումնասիրութեան, սփիւռքագիտութեան եւ արդի հայ կիրառական ընկերաբանութեան, իր յատուկ դրոշմը դնելով հայրենիքի մէջ մշակութային եւ մտաւորական կեանքի զարգացման եւ բեղմնաւորման գործընթացին:*

*Այս բոլորէն անդին, Դոկտոր Գէորգ Խրլոբեան այն յատուկ անձնաւորութիւններէն մէկը եղաւ, որ երբ պայմանները առիթ ընծայեցին անոր, ան կրցաւ ոսկի կամուրջը ըլլալ հայրենիքի եւ սփիւռքի միջեւ, սփիւռքահայու մօտ գոյութիւն ունեցող ոգեղէն հայրենիքը առարկայացուց եւ անոր հայրենաբաղձութեան յագուրդ տուաւ՝ համալսարանական հայ ուսանողներու թէ ժողովրդական լսարաններու մէջ հայ հանրութեան հետ չփուելով եւ գանոնք լուսաւորելով հայագիտական դասախօսութիւններով եւ զրոյցներով: Այսպէս ան իր հայրենի կրթական բարձր պաշտօններու կողքին, նաեւ որպէս դասախօս գործուղուեցաւ սփիւռքի հայահոծ գաղութներ, ուր իր բարերար հետքը ձգեց այդ ժամանակի հայ ժողովուրդի եւ յատկապէս հայ երիտասարդութեան մտածողութեան վրայ:*

*Դոկտոր Խրլոբեանի գրական ժառանգութիւնը կը հաշուէ շուրջ 400 գիտական յօդուածներ՝ նուիրուած հայագիտական եւ ընկերաբանական հարցերու մենագրութիւններ՝ «Անանիա Շիրակացիի աշխարհայացքը», «Գրիգոր Նարեկացիի հումանիզմը», «Տէրունական աղօթքիի մեկնաբանութեան ընկերային-հոգեբանական հարցը», «Ցեղասպանագիտութիւն», լոյս տեսած քսան գիրքեր եւ մօտաւորապէս 200ուսումնասիրութիւններ աստուածաբանական խորքով եւ "Problems of Complex Upbringing at School," "Social and Psychological Problems of University Upbringing" and "The Modern Notions of Upbringing.*

*Անոր անձնուրաց ու ազգանուէր աշխատանքը գնահատուեցաւ պետական եւ կրօնական պատասխանատու մակարդակներու վրայ դրսեւորուելով զանազան պարգեւատրումներով եւ ան՝ Գէորգ Խրլոբեան համեստ մշակը արժանացաւ «Սուրբ Սահակ Մեսրոպ» պատուանշանին Երանաշնորհ Գարեգին Ա. Ամենայն հայոց Կաթողիկոսի ձեռամբ, «Արծաթեայ շքանշանի» Երեւանի Պետական համալսարանէն եւ Վենետիկի Մխիթարեան Միաբանութենէն՝ «Մխիթար Սեբաստացի»ի անուան պատուոնշանին:*

*Երիտասարդ Գէորգ Խրլոբեան եկաւ հայրենիք իր կեանքի առաջին քսանամեայ գարունները չամբողջացուցած, որպէս սփիւռքահայ ուսանող մը սակայն մագնիսացած հայրենիքի ընձեռած ուսումնական բարիքներէն ան բարձրագոյն ուսում ստացաւ, վկայուեցաւ, դարձաւ Դասախօս, դաստիարկեց հայրենի սերունդներ եւ հոն մնալով իր կեանքը կապեց արժանաւոր հայուհիի մը հետ ամուսնանալով՝ մանկավարժուհի երաժիշտ Անահիտ Սեդրակեանի հետ ու կազմեց հայկական բոյն մը ունենալով երկու դուստրեր՝ Մարինէ եւ Արփի: 1989էն վերջ աշխատանքային պայմաններու բերումնով ընտանիքը փոխադրուեցաւ Միացեալ Նահանգներ ուր Դոկտ. Գէորգ տակաւին երկար տարիներ ծառայեց հայ դպրութեան մնալով միշտ հալէպցի բարեսիրտ տղան, նոյնիսկ իր հիւանդութիւնը համեստութիւնն ու պարզութիւնը չկրցաւ նուաճել, մնաց ժպիտը դէմքին պատրաստ օգնելու եւ սորվեցնելու, նոյնիսկ եթէ առողջապահական ամենավատ պայմաններու մէջ ըլլար. մնաց իր մտային բարձունքին վրայ, միշտ պայծառ, միշտ զգօն եւ վեհ մտածումներով, ծրագիրներով ու տրամադրութեամբ: Սակայն մահը անողոք էր զինք ալ կլանեց եւ ֆիզիքապէս առաւ ու տարաւ :*

*Անհաւատալի էր, բայց իրաւ, հինգ տարիներ առաջ Յունուար 30- 2010-ին ան փակեց իր աչքերը յաւէտ :*

*Սակայն կը հաւատամ՝ բարձունքներն չեն նուաճուիր, կը նուա-*

*Շար.ը էջ 19*



## ԵՐՋԱՆԻԿ ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ՅԱՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ 7 ԳԱՂՏՆԻՔ

1. Այսպիսի կինը միշտ երջանիկ եւ ուրախ է.

Ե՛ւ երջանիկ ընտանիք, ե՛ւ յաջող աշխատանք ստեղծելու փափաք ունեցող կնոջ կեանքին մէջ տեղ չունին հիասթափութիւնն ու ափսոսանքը: Ոչ մէկը եւ ոչինչ կրնայ ետ պահել զինք իր կայացուցած որոշումէն:

2. Ան գիտէ, որ աշխարհի մէջ գոյութիւն ունի փոխհատուցման օրէնք.

Օրինակ՝ եթէ ան կ՚ուզէ նուէրներ եւ հաճելի անակնկալներ ստանալ իր ամուսինէն, ուրեմն ատիկա պէտք է փոխադարձ ըլլայ: Մենք սովորաբար կը ստանանք այն, ինչ կու տանք:

3. Նման կիները գիտեն, որ իրենց բնաւորութեան բոլոր գիծերը՝ ե՛ւ դրական, ե՛ւ ժխտական, օգտակար են իրենց համար. այսպիսի կիները շատ լաւ կը գիտակցին, որ անթերի մարդիկ չեն ըլլար եւ անհնար է պայքարիլ բնաւորութեան բոլոր ժխտական գիծերուն դէմ:

4. Նման կիները երբեք չեն յոգնիր.

Այսպիսի կիները ուժի, ջիղերու, միտքերու մեծ պաշար ունին: Անոնց համար հանգստանալը այլ գործ մը ընելն է:

Անոնց ուժերը կը մարին միայն գիշերը: Իսկ օրուան ընթացքին անոնք նոյնիսկ ժամանակ կը գտնեն առանձին մնալու իրենք իրենց հետ:

5. Անոնք երբեք չեն քննադատեր.

Այսպիսի կիները շատ լաւ կը գիտակցին, որ պէտք չէ քննադատեն ու նուաստացնեն միւսները: Անոնք միշտ կ՚ընեն այն, ինչ կ՚ուզեն՝ անկախ միւսներուն կարծիքէն: Եւ երբ կը զգան, որ ուժերը արդէն կը սպառին, 15 վայրկեան կ՚աղօթեն, ուժով կը լիցքաւորուին եւ կը շարունակեն իրենց գործունէութիւնը:

6. Անոնք կը հասկնան, որ ոչ մէկը կրնան վերադաստիարակել. Վերադաստիարակել կը նշանակէ ուեւէ մէկուն ստիպել մտածել ու գործել այնպէս, ինչպէս դուք կ՚ուզէք: Սակայն երջանիկ ընտանիք եւ յաջող աշխատանք ստեղծելու ցանկութիւն ունեցող կիները կը հասկնան, որ ոչ մէկը կրնան վերադաստիարակել եւ ատիկա ուժերու եւ ժամանակի անտեղի կորուստ է:

7. Անոնք ոչ մէկ բանէ կախեալութիւն ունին. Այս կիները միշտ կը յիշեն, որ կեանքը մէկ վայրկեանի մէջ կրնայ փոխուիլ: Ուստի, անոնք կ՚առաջնորդուին միշտ բոլորին եւ ամէն ինչին երախտագիտութեամբ հրաժեշտ տալու սկզբունքով: Այս կիները կրնան անկեղծօրէն գնահատել իրենց յարաբերութիւնները եւ ս թափ դիտարկել զանոնք:

## ԻՆՉՈ՞Ւ ԱՅԴՔԱՆ ՀԱՃԵԼԻ Է ԲԱՐԵԿԱՄԱՆԱԼ ԸՆԹԵՐՑԱՍԷՐ ՄԱՐԴՈՑ ՀԵՏ

Շատ դժուար է գտնել մարդիկ, որոնք կ՚ընթերցեն հաճոյքի համար, ոչ՝ ստիպողաբար: Եւ նման ընթերցասէր մարդոց հետ շատ հաճելի է ծանօթանալ: Իսկ ինչո՞ւ:

-Իբրեւ կանոն, անոնք ունին շատ նուրբ հոգի. Ընթերցելու ընթացքին մարդիկ կը ծանօթանան այն իրականութեան, որ կը շրջապատէ զիրենք: Ասիկա կ՚օգնէ զարգացնելու իրենց մտահորիզոնն ու տեսակէտը: Ընթերցանութիւնը կը նպաստէ գիտելիքներու բարձրացման եւ աւելի համբերատար ու հանդուրժող կը դարձնէ մարդը: Անիկա կը սորվեցնէ անոնց գնահատել իւրաքանչիւր մանրուք:

-Անոնք աւելի իմաստուն եւ զարգացած են.

Որքան շատ կ՚ընթերցեն, այնքան աւելի խելացի եւ բազմակողմանի զարգացած կը դառնաք: Ընթերցասէր մարդիկ աւելի դիւրութեամբ կ՚ընկալեն տեղեկութիւնը եւ անոնց հետ հաճելի է բարեկամանալ, քանի որ խօսելու ընթացքին շատ հազուադէպօրէն կը լսէք «չեմ գիտեր» բառը:

-Անոնք ունին ստեղծագործ միտք.

Ստեղծագործ միտքը շատ կարեւոր է յարաբերութիւններու մէջ, քանի որ մէկ տարի չփուելէ ետք արդէն շատ դժուար է դիմացինը հետաքրքրել կամ զարմացնել: Սակայն այն մարդը, որ շատ կ՚ընթերցէ, սպունգի նման կ՚իւրացնէ հեղինակներու միտքերը, որոնց մասին ան մինչ այդ չէր գիտեր: Եւ եթէ կ՚ուզէք երկարատեւ յարաբերութիւններ սկսիլ, ընտրեցէք ընթերցասէր մէկը:

-Անոնք հոգիով դեռ մանուկ են.

Նման մարդիկ կարծես մանուկ ըլլան, անոնք հիանալի կերպով պիտի դաստիարակեն իրենց զաւակները: Միայն ընթերցասէր մարդը կրնայ իր փոքրիկին պատմել բազմաթիւ հեքիաթներ՝ նոյնիսկ յօրինել:

- Անոնք աւելի կրքոտ սիրեկաններ են. Այս տեսակ մարդիկ յաճախ կը կարդան սիրային նկարագրութիւններ, եւ բնականաբար ընթերցասէր մարդիկ աւելի մեծ երեւակայութիւն ունին այս հարցով:

-Անոնք աւելի համբերատար են. Քանի որ գիրքը կարդալու եւ աւարտելու համար կը պահանջուի տեւական ժամանակ (օրեր, եթէ ոչ՝ շաբաթներ), հետեւաբար, պէտք է համբերատար ըլլալ: Ուստի, անոնք աւելի համբերատար ու հանդուրժող են:

-Ընթերցասէր մարդիկ շատ բան կրնան սորվեցնել դիմացինին.

Արդէն նշեցինք, որ ընթերցասէր մարդիկ շատ բանիմաց են, քանի որ անոնք կը սիրեն նոր գիտելիքներ ձեռք բերել: Հետեւաբար, անոնց հետ ծանօթանալով դուք միշտ նոր տեղեկատուութիւն կը ստանաք տարբեր ոլորտներու մասին:

-Անոնք իսկապէս գիտեն, թէ ինչ է ռոմանթիկ ըլլալ.

Անոնք ունին ռոմանթիկ բնաւորութիւն, քանի որ գրեթէ բոլոր գիրքերուն մէջ գլխաւոր հերոսները միասին կ՚ըլլան միայն շարք մը դժուարութիւններ եւ խնդիրներ յաղթահարելէ ետք: Եւ եթէ դուք ընկերութիւն ընէք ընթերցասէր մէկուն հետ, վստահ եղէք, որ ռոմանթիկ յարաբերութիւնները հեռու չեն:

-Անոնք գիտեն, թէ ինչ կը նշանակէ հոգատարութիւն.

Գիրքը պատրաստուած է թուղթէ, որ փխրուն եւ դիւրաբեկ է: Իսկ ընթերցասէր մարդը մեծ հոգատարութեամբ կը վերաբերի իր սիրելի գիրքին, քանի որ օր մը ան անպայման գիրքը վերընթերցելու ցանկութիւն պիտի ունենայ: Սակայն ընթերցասէր մարդիկ շատ ուշադիր են ոչ միայն իրենց, այլեւ ուրիշի իրերուն նկատմամբ: Այն ամէնը, որ արժէքաւոր է ընթերցասէր մարդու համար, ան խնամքով եւ մեծ հոգատարութեամբ կը վարուի անոր հետ:

## ՄԱՐԴՈՒ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

Հնագոյն ժամանակներէն մարդիկ կը հաւատային, որ գոյնը ունի կախարդական ուժ: Գիտնականները կատարած են բազմաթիւ հետազօտութիւններ, որոնք հաստատած են այն փաստը, որ գոյնը կ՚ազդէ մարդու տրամադրութեան, զգացումներուն, միտքերուն եւ նոյնիսկ առողջութեան վրայ: Իւրաքանչիւր գոյն մարդու ուղեղին մէջ կը յառաջացնէ իւրայատուկ գրգիռ:

Այսպիսով՝ կապոյտ գոյնը մարդու մօտ կը յառաջացնէ հանգստութեան եւ բաւարարուածութեան զգացում, մուգ կապոյտը՝ անվտանգութեան զգացում: Բաւական է բարկացած մարդը մտնէ մուգ վարդագոյն պաստառներով սենեակ, որպէսզի մէկ անգամէն հանգստանայ եւ նոյնիսկ ննջէ: Մուգ վարդագոյնը նաեւ կը հանգստացնէ մկանները: Ասկէ կարելի է եզրակացնել, որ գոյնը կ՚ազդէ ոչ միայն մարդու տրամադրութեան, այլ ընդհանրապէս մարդու մարմնին վրայ:

Գոյնի օգնութեամբ կարելի է ոչ միայն կանխել հիւանդութեան զարգացումը, այլեւ բուժել արդէն հիւանդ մարդը: Գունային բուժումը կ՚օգտագործէին Հին Եգիպտոսի մէջ, սակայն դարերու ընթացքին այդ մասին գիտելիքները անհետացան:

Այդ երեւոյթին հանդէպ բարձրացաւ հետաքրքրութեան նոր ալիք, երբ 1878 թ. հետազօտող-գիտնական Էտուին Պեպպլոյս ընծայեց «Գոյնի բուժիչ ուժը» աշխատանքը, որ յաջողութիւն ունեցաւ եւ բժշկական շրջանակներու մէջ մեծ աղմուկ բարձրացուց: Հիմնուելով երկարատեւ հետազօտութիւններու արդիւնքներուն վրայ՝ գիտնականը շարադրեց լուսային եւ գունային բուժման հիմերը: «Գոյնը չունի անմիջական բուժիչ ազդեցութիւն, այլ, աւելի շուտ, հոգեբուժութեան տեսակներէն մէկն է»,- կը նշէ Պեպպիթ:

Ան գունային ազդեցութիւնը կը բաժնէ երկու ուղղութիւններու՝ «կարմիր» եւ «կապոյտ»: Անոր կարծիքով՝ այդ հիմնական գոյները կ՚ազդեն ջղային համակարգի աշխատանքին վրայ, իսկ դեղնականաչաւուն յարաբերակցումը ան համարեց չէզոք:

Կարմիրի երանգները կը զօրացնեն երակներու եւ մկաններու կենսունակութիւնը, կը նպաստեն արեան ճնշման բարձրացման, կ՚արագացնեն սրտի աշխատանքը, կը բարելաւեն նիւթափոխանակութեան եւ սպիտակման գործընթացները: Կարմիրը կրնայ յառաջացնել փսխում, յաճախամիզութիւն, լեղագատում, ունենալ տաքցնող ազդեցութիւն: Կարմիրի երանգները կարելի է օգտագործել ջղային համակարգի խթանման համար:

Անոնց ազդեցութիւնը նաեւ կրնայ արագացնել սակաւարիւնութեամբ տառապող հիւանդներու կազդուրման գործընթացը, ինչպէս նաեւ՝ օգնել երկարատեւ հիւանդութենէ ետք վերականգնելու ուժերը:

Տաք գոյները վնասակար են սուր բորբոքային գործընթացներ, փորհարութեան, անքնութեան եւ ջղային համակարգի գրգռուածութեան ժամանակ: Կապոյտի պաղ երանգները կը նպաստեն արեան ճնշման իջնելուն, կը դանդաղեցնեն զարկերակը, կը վերացնեն բորբոքային գործընթացները: Անոնք կը նպաստեն ջերմութիւնը իջեցնելուն, կը հանգստացնեն ջիղերը, կ՚արագացնեն ոսկրային հիւսկէնի վերականգնումը: Միեւնոյն ժամանակ՝ այդ գոյները հակացուցուած են կաթուածներու, լեղուղիներու եւ երիկամունքներու մէջ քարերու գոյացման, այտուցներու, ոչ արագ ընթացող քրոնիկ հիւանդութիւններու եւ հիփոթենզիայի ժամանակ:

Ըստ գիտնականին՝ մարմնի իւրաքանչիւր մաս «ունի» իր համապատասխան գոյնը: Այսպէս. գլխուն կը համապատասխանեն պաղ գոյները՝ մանիշակագոյնը, կապոյտը եւ երկնագոյնը: Սրտին, թոքերուն, դիմադրողական եւ արիւնատար համակարգերուն՝ կանաչը, իսկ աղիքներուն, ենթաստամոքսային գեղձին, լեարդին եւ ստամոքսին՝ դեղինը կամ դեղնականաչը: Միզապարկին եւ հաստ աղիքին կը համապատասխանէ նարնջագոյնը:

## ՁՄԵՐՈՒԿԸ ԼԻԳՈԲԻՆ ԵՒ ԱՐՃԱԹ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ձմերուկը հարուստ է հակաօքսիտանդ եւ հակաուռուցքային յատկութիւններ ունեցող քարոթինային նիւթ՝ լիգոբինով, որ չի բաժնուիր ջերմային մշակման ժամանակ:

Ձմերուկի 100 կրամ պտղամիսը կը պարունակէ մարդու մարմնին անհրաժեշտ C վիթամինի մէկ օրուան չափաբաժինի 9 տոկոսը, սիլիցիումի՝ 40, քալիումի՝ 9.4, երկաթի՝ 4: Ձմերուկը կը պարունակէ նաեւ արծաթ՝ 7.1 տոկոս:

Ձմերուկը շատ օգտակար է, եթէ ուտէք առաւօտեան՝ 5:00-7:00-ի ընթացքին, քանի որ այդ ժամերուն մարմինը ունի հեղուկի պէտք, որպէսզի լեղապարկէն դուրս հանուի օրուան ընթացքին կուտակուած թոյնը՝ լեղիի հետ:

Արծաթը ունի հակամանրէ յատկութիւն, սիլիցիումը կը նպաստէ դիմադրողականութեան բարձրացման, եւ այլն: Ա. Ամասիացին ձմերուկի բուժիչ յատկութիւններու մասին գրած է. «Ձմերուկը օգտակար է տենդի պարագային, իսկ եթէ զայն ուտեն քացախի ու մեղրի հետ, անիկա կը մաքրէ միզապարկը»:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## ԱՐՍԷՆ ՋՈՒԼՖԱԼԱԿԵԱՆԸ ՍՏԱՄՊՈՒԼԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՈՍԿԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ



Յունահռոմէական ոճի ըմբշամարտի Լոնդոնի Օլիմպիական խաղերի փոխախոյեան Արսէն Ջուլֆալակեանը ոսկէ մետալակիր է դարձել Վեհբի Էմրէի եւ Համիդ Քափլանի անուան միջազգային մրցաշարի 75 կգ քաշային կարգում:

Ստամպուլում կայացած մրցաշարում աշխարհի 2014թ. ախոյեանը տարել է 4 յաղթանակ՝ ոչ մի միաւոր չտալով մրցակիցներին:

66 կգ քաշային Արամ Ջուլֆալակեանը մեկնարկային գօտեմարտում պարտուել է ատրպէյճանցի Ռովշան Տագիեւին եւ լքել պայքարը:

Հայաստանի հաւաքականի անդամ Մաքսիմ Մանուկեանն էլ արծաթէ մետալ է նուաճել Պուլկարիայի մայրաքաղաք Սոֆիայում աւարտուած Դան Կոլովի եւ Նիկոլա Պետրովի անուան միջազգային 54-րդ մրցաշարի 85 կգ քաշային կարգում:

Մանուկեանը, տանելով 2 յաղթանակ, կիսաեզրափակիչում պարտութեան է մատնել նաեւ Հայաստանի մէկ այլ ներկայացուցիչ Արթուր Շահինեանին, որը յետագայում յաղթել է պրոնզէ մետալի համար գօտեմարտում: Մաքսիմ Մանուկեանը եզրափակիչում պարտուել է պուլկարացի Նիկոլայ Բայրակովին եւ բաւարարուել երկրորդ տեղով:

Դան Կոլովի եւ Նիկոլա Պետրովի անուան մրցաշարում հայ ըմբիշները նուաճել են 3 ոսկէ, 2 արծաթէ եւ 2 պրոնզէ մետալ:

## ՄԻՀՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ՈՍԿԷ ՄԵՏԱԼ Է ՆՈՒԱՃԵԼ ՊՈՒԼԿԱՐԻԱՅՈՒՄ

Եւրոպական խաղերի փոխախոյեան Միհրան Յարութիւնեանը ոսկէ մետալ է նուաճել Պուլկարիայում անցկացուող Դան Կոլովի եւ Նիկոլա Պետրովի անուան ըմբշամարտի միջազգային մրցաշարում:

Յունահռոմէականների 71 կգ քաշային կարգում Յարութիւնեանը մեկնարկային գօտեմարտում 8:0 հաշուով առաւելութեան հասաւ պուլկարացի Մայկալ Իգմիրլիսկիի նկատմամբ: Յարութիւնեանի յաջորդ մրցակիցն իտալացի Դաւիդէ Կասկավիլան էր, ում հայ ըմբիշը կրկին յաղթեց բացարձակ առաւելութեամբ: Եզրափակիչի ուղեգիրը Յարութիւնեանը վիճարկեց Ալժիրի ներկայացուցիչ Բուջեմլինէ Աքրեմի հետ՝ յաղթելով 11:0 հաշուով: Եզրափակիչ գօտեմարտում Միհրանը յաղթեց եգիպտացի Ադհամ Ահմեդ Սալեհին եւ գրաւեց առաջին տեղը, յայտնում է ՀԱՕԿ-ի կայքը:

## ԲՐԻՒՍ ԱՐԵՆԱ. «ՇԻՐԱԿԻ» ՀԵՏ ԽԱՂԸ ԼԱՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ ԷՐ



Ամերիկեան «Լոս Անճելոս Գելաքսիի» գլխաւոր մարզիչ Բրիւս Արենան մեկնաբանել է ընկերական խաղում Գիւմրիի «Շիրակի» նկատմամբ յաղթանակը:

«Կարծում եմ՝ սա շատ լաւ փորձութիւն էր մեզ համար: Կարողացանք հասկանալ, թէ ինչ փունկցիոնալ վիճակում են մեր ֆուտպոլիստները: Առաջին խաղակէսում խաղի տեմպն աւելի բարձր էր: Այսօր ունեցանք մի շարք կոլային պահեր: Ընդհանուր առմամբ, գոհ եմ»,- Բրիւս Արենայի խօսքը մէջբերում է «Լոս Անճելոս Գելաքսիի» կայքը:

Յիշեցնենք, որ Գալիֆորնիայի «Ստաբհաբ» կեդրոնում կայացած խաղում հայկական խումբը պարտուել էր 1:2 հաշուով: «Լոս Անճելոս Գելաքսիի» առաջատարները, այդ թւում՝ Ստիւըն Ջերարդը, Ռոբի Քինն ու Ջովանի Դոս Սանթոսը, մասնակցել են առաջին խաղակէսին, որում կոլեր չեն գրանցուել:

ԱՄՆ-ում հաւաք անցկացնող Գիւմրիի «Շիրակը» ստուգողական խաղ է անցկացրել MLS-ի ներկայացուցիչ «Լոս Անճելոս Գելաքսիի» հետ եւ պարտուել 1:2 հաշուով, յայտնում է ակումբի կայքը:

Գալիֆորնիայի «Ստաբհաբ» կեդրոնում կայացած խաղում «Լոս Անճելոս Գելաքսիի» առաջատարները, այդ թւում՝ Ստիւըն Ջերարդը, Ռոբի Քինն ու Ջովանի Դոս Սանթոսը, մասնակցել են առաջին խաղակէսին, որում կոլեր չեն գրանցուել: Երկրորդ խաղակէսում ամերիկեան ակումբը հանդէս է եկել այլ կազմով, իսկ 54-րդ րոպէին բացել է հաշիւը: 74-րդ րոպէին Վիուլեն Այվազեանը խփել է «Շիրակի» պատասխան կոլը, սակայն 5 րոպէ անց ամերիկացիներն աչքի են ընկել եւս մէկ անգամ՝ հասնելով յաղթանակի:

www.massispost.com

## ՆՈՎԱԿ ՋՈԿՈՎԻՉԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ ՏԻՏՂՈՍԸ



Աշխարհի առաջին ռակետ Նովակ Ջոկովիչը պաշտպանեց Թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան տղամարդկանց մենախաղի չեմպիոնական տիտղոսը:

Մելպուրնում աւարտուած մրցաշարի եզրափակիչում սերպ թենիսիստը 3 սեթում վստահ յաղթանակ տարաւ բրիտանացի Էնդի Մարէյի նկատմամբ: 2 ժամ 50 րոպէ տեւած մրցախաղում գրանցուեց 6:1, 7:5, 7:6 հաշիւը:

Սա 28-ամեայ Ջոկովիչի 6-րդ յաղթանակն էր Australian Open-ում եւ 11-րդ տիտղոսը մեծ սաղաւարտի մրցաշարերում: Նա նուաճեց կարիերայի 61-րդ տիտղոսը:

Նովակ Ջոկովիչ (Սերբիա) - Էնդի Մարէյ (Մեծ Բրիտանիա)՝ 6:1, 7:5, 7:6

## ՍԵՐԵՆԱ ՈՒԻԼԻԱՄՍ. ԱՅՍՕՐ Ի ԶՕՐՈՒ ՉԷԻ ԱՒԵԼԻՆ

Աշխարհի առաջին ռակետ Սերենա Ուիլիամսը մեկնաբանել է թենիսի կանանց Աւստրալիայի բաց առաջնութեան եզրափակիչում գերմանացի Անժելիկ Կերբերից կրած պարտութիւնը:

«Շատ լաւ ու լարուած հանդիպում էր: Իրական հետաքրքիր: Նոյնիսկ հիանալի էր պարզապէս լինել կորտում:

Իրօք, ուրախ եմ Կերբերի համար: Այսօր նա շատ լաւ խաղաց: Կարծում եմ՝ շատերն Անժելիկից կարող են սովորել, թէ ինչպէս պէտք է տրամադրուել խաղին: Նա մինչեւ վերջ չյանձնուեց: Կերբերը լաւ աղջիկ է, եւ ես ուրախ եմ նրա համար:

Ես ցուցադրեցի այն ամէնը, ինչի ի զօրու էի այսօր: Աւելին չէի կարող անել: Գուցէ վաղը կը կարողանայի ինչ-որ այլ բան ցուցադրել, բայց այսօր՝ ոչ»,- ամերիկուհու խօսքը մէջբերում է Australian Open-ի կայքը:

Յիշեցնենք, որ 28-ամեայ Կերբերը յաղթել էր 3 սեթում եւ առաջին տիտղոսը նուաճել «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում:

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՒՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՍՏԱԴԻՈՆԸ



Լոս Անճելոսում կառուցւում է ամերիկեան ֆուտպոլի համար նախատեսուած NFL Disney World աշխատանքային անուանումով մարզահամալիրը: Նախագծի արժէքը մօտ 3 միլիարդ տոլար է: 80 հազար տեղով ստադիոնը համերգների ժամանակ կը կարողանայ ընդունել 100 հազար հանդիսականի, հաղորդում է hksinc-ը:

Կառուցողը ամերիկեան ֆուտպոլի «Լոս Անճելոս Ռեմս», պասքետպոլի «Դենվեր», տափօղակով հոկէյի «Կոլորադօ» եւ Լոնդոնի «Արսենալ» ֆուտպոլային ակումբի սեփականատէր Սթեն Կրոնկեն է:

Համալիրի տարածքում կը լինեն նաեւ 2500 առանձնատներ, 300 համարով հիւրանոց: Լոս Անճելոսի կեդրոնից մի քանի մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Ինգլուդում կառուցուող համալիրը կը շահագործուի 2019-ին:

## ՅԱՅՏՆԻ ԵՆ ՖՈՒՏՊՈԼԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ 15 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ֆուտպոլի Իրաքի հաւաքականը 2004 թուականից յետոյ առաջին անգամ նուաճել է Օլիմպիական խաղերի ուղեգիր՝ Ասիայի մինչեւ 23 տարեկանների առաջնութեան երրորդ տեղի համար խաղում, լրացուցիչ ժամանակում պարտութեան մատնելով Քաթարի թիմին՝ 2:1:

Արդէն յայտնի են ֆուտպոլի օլիմպիական մրցաշարի 15 մասնակիցները. Պրազիլիա, Արժենթինա, Մեքսիքօ, Հոնտուրաս, Գերմանիա, Պորտուգալիա, Դանիա, Շուեդիա, Ալժիր, Նիգերիա, Հարաւային Աֆրիկէ, Ճաբոնիա, Հարաւային Քորիա, Իրաք, Ֆիճի: Վերջին ուղեգիրը մարտին կը վիճարկեն ԱՄՆ-ի եւ Գոլումպիայի հաւաքականները:

## «ՀԱՅԵՐԸ 2115 ԻՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 7-էն

ուածին 80 առ հարիւրը Հայաստան չէ այցելած եւ «մենք պէտք ունինք հզօր Հայաստանի եւ հզօր կազմակերպութիւններու»: Ան այս ուղղութեամբ տուաւ «Թումօ»ի եւ «100 կեանք»ի օրինակները: Հայաստանէն Արման Ջիլաւեան խօսեցաւ ընդհանրապէս տիրութեան զգացումի բացակայութեան մասին, ըսելով թէ ոչ մէկ խնդիր կը նկատենք մերը, չենք խօսիր անոնց մասին եւ թէ Հայաստանը մեր սեփականութիւնը սեպելու գծով կարծէք թէ կապերը կորսնցուցած ըլլանք, ուրիշներուն ձգելով այս ուղղութեամբ որոշումներ կայացնելու գործը«:

# ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Բարեկամի մը վիշտին բաժնեկից ըլլալով՝ մխիթարութիւն պիտի ըլլաս իրեն: Դատական ժողովի մը ներկայ պիտի ըլլաս: Արտասովոր սակայն լուրջ հարց մը քեզ պիտի նեղէ, որու արդիւնքը ի նպաստ քեզի պիտի ըլլայ:
Բախտաւոր թիւերդ են: 1,8,17,24,33

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Ստանձնած պատասխանատուութիւններուդ մասնակցիլդ խիստ կարեւոր եւ պայման է: Ուրիշները դատելով՝ անոնց կեանքին մէջ լուրջ հետեւանքներ կը յառաջացնես: Տանդ մէջ տակնուվրայութիւն մը՝ պիտի ստիպէ քեզ մաքրութիւն ընել:
Բախտաւոր թիւերդ են: 3,10,21,23,31

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 20-Յունիս 20
Երբ թերութիւններուդ նկատմամբ ոեւէ նկատողութիւն լսես՝ անմիջապէս կը շփոթիս թէ արդեօք իրականութիւն են կամ ոչ: Թէեւ չ՛ուզելով՝ կամ դժկամութեամբ՝ պէտք է աշխատանքդ շարունակես եւ գործիդ աւելի կարեւորութիւն տաս:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,28,29,34

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Դիմումնագիր մը, որու պատասխանին սրտագին կը սպասես, վերջապէս պիտի պատասխանուի, սակայն ոչ քու նախատեսած արդիւնքով: Մի խստացներ պահանջքներդ՝ տրամաբանող եղիր: Մեծ ամբոխի մը մէջ ներկայ պիտի ըլլաս:
Բախտաւոր թիւերդ են: 6,17,24,31,35

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Շատ կարեւոր շարժառիթի մը նախաձեռնութիւնը քեզի պիտի յանձնուի, լաւագոյնդ ըրէ յաջող դուրս գալու այդ առիթէն: Ընտանիքիդ անդամները նեղութեան մի ենթարկեր քու անձնական գործերուդ համար: Միշտ ներող եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 7,16,25,28,32

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Բարեկամներուդ միջեւ ծագած մէկ նեղութեան պարագային, արդար են իմաստուն եղիր ու ճիշդ դատէ: Գործի մը պիտի նետուիս, որքան որ ալ կացութիւնը վատթարանայ՝ մի վհատիր եւ մի երկմտիր, շարունակէ լաւատեսութեամբ:
Բախտաւոր թիւերդ են: 1,17,23,26,33

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Զաւակներուդ սխալներուն միշտ ուշադիր ըլլալու ես եւ հետեւելու անոնց առօրեայ գործերուն ու զբաղմունքներուն: Երբեք մի փորձեր ուրիշի մը նման ըլլալ՝ դուն քու յատուկ նկարագիրդ ունիս՝ գոհացիր: Գաղութիդ պէտքերուն անպայման նպաստէ:
Բախտաւոր թիւերդ են: 7,16,29,32,35

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Հպարտանալու եւ ինքզինքդ գովելու շատ առիթներ ունենալով հանդերձ՝ շատ հեզ ես եւ ընկերային: Նիւթական պարագադ աշխատանքի կը կարօտի: Խնայող եղիր եւ ապագադ մտածէ: Բարեկամ մը բարդ հարցով պիտի մօտենայ գաղափարդ առնելու:
Բախտաւոր թիւերդ են: 3,6,12,21,23

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Ծրագիրներդ հաստատ հիմի վրայ կազմէ եւ նկատի ունեցիր բոլոր պարագաները: Աւանդական սովորութիւնները քեզ շատ կը հետաքրքրեն եւ կը սիրես պահել զանոնք ընտանեկան կեանքէդ ներս: Մի նեղանար, երբ թելադրութիւններուդ չհետեւին:
Բախտաւոր թիւերդ են: 4,9,18,25,33

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Իմաստութեամբ փորձէ համոզել գործընկերդ որ հետեւի քու ծրագրիդ եւ գործը յաջողցնէք միասնաբար: Որոշ հարցերով միշտ մտահոգ ես, սակայն մտահոգութիւնը չի կրնար յագեցնել քու կարիքներդ: Վստահէ ճակատագրին եւ լաւատես եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 8,18,22,26,35

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Դուն քեզ մի հարցադրեր թէ որքան կարելի է քեզի համար իրագործել քիչով: Բաւական տաղանդ եւ գաղափարներ ունիս, վստահէ անոնց: Դիւրիմացութիւն մը ընտանեկան յարկէդ ներս սաստիկ պիտի խռովէ եւ հիւանդացնէ քեզ: Համբերէ:
Բախտաւոր թիւերդ են: 5,11,22,24,30

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Հարց մի ըներ թէ ինչպէս դուրս պիտի գաս մեծածախս ծրագիրէ մը, կեդրոնացիր անոր այլ մանրամասնութիւններուն վրայ: Գործիդ բոլոր պայմանները գոհացնելով հանդերձ, բնաւ գոհ չես արդիւնքէն: Ուրիշին ունեցածին մի նախանձիր:
Բախտաւոր թիւերդ են: 10,16,24,28,32

# ԶՂՋՈՒՄ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

*Կէսօրից յետոյ էր, արեւագունդը յամրաքայլ մայրամուտին էր մօտենում: Լոս Անջելէսեան գարուն եղանակ, հաճելի զեփիւռաշունչ շոյանք, քայլերս ուղղեցի դէպի Tujunga-ի Valmont-Commerc-ի զբօսայգին, ոչ ընդարձակ, մանուկ-երեխաների համար յարմար խաղավայրով: Նրա տարածքում գտնւում է քարաշէն հին շէնք, որը թանգարանի է վերածուել՝ «Bolton Hall Museum» (Բոլթոն ընտանիքին պատկանող թանգարան): Ցուցադրութեան դրուած են հին կահկարասիներ, խոհանոցային իրեր, պարտիզբանական եւ այգեբանական գործիքներ եւ այլն… ոչ շատ հեռու տարիների եւ ոչ նմանը անգտանելի:*

*Զբօսայգու հիւսիս-արեւմըտեան ծայրամասում հանգստավայր է սակաւ թւով քարէ սեղանիկներ շուրջը նստարաններ, գլխավերեւում կողք-կողքի շարուած են գերաններ, բայց ոչ փակ ծածկով, խաղողավազը տարածուել է գերանների վրայ, դալկաթոյր սաղարթը մատնում է նրա ոչ փարթամ վիճակը, մէկի ասութեամբ, թէ՝ -նա վայրի որթ է եւ կատուի խաղողի նման շատ մանր եւ ցանցառ պտուղ է տալիս ոչ դուրեկան: Շատ էլ չհաւատացի նրա ասածին, քանի որ հոգատարութեան պակասն էր նրան այդ վիճակի մատնել:*

*Այս հանգստավայրի յաճախողները տարբեր ազգի քաղաքացիներ են՝ մեծամասնութեամբ տարիքաւոր հայեր, որոնք տան ձանձրոյթից ձերբազատուելու համար թէ՛ առաւօտեան եւ թէ՛ կէսօրից յետոյ դիմում են այստեղ զբաղուելու ի մասնաւորի խաղերով՝ նարդի եւ թղթախաղ: Խաղ չգիտցողները մի կողմում շրջանակ կազմած քաղաքական հարցերով, լսողի եւ դիտողի դերով ու ոմանք էլ զրոյցներով ժամանակ են անցկացնում եւ այսպէս իբր իրենց կարծիքով՝ «սրտներս բացուած» տները մեկնում:*

*Երբեմն այստեղ եմ գալիս ծանօթ - բարեկամի հանդիպելու նպատակով, տեսնում եմ միայն շատ-շատերին խաղն է հետաքրքրում, անտարբերութիւն գրքի ու ընթերցանութեան հանդէպ, ոչ թէ այստեղ, այլ տեղերում էլ նոյն վիճակն է տիրակալ, կարծես մարդիկ խոյս են տալիս գրքից, հայ գրողը չի քաջալերւում, գրքերը մնում են գրախանութներում անվաճառ:*

*Ի՞նչ պիտի անել գրքի հրապարակը հացի համ ստանայ եւ դեռ աւելին: Իմ կարծիքը միացնելով շատ-շատերի կարծիքին, համոզուած եմ, որ գիրք նուիրելու սովորութիւն պէտք է առաջացնել տօնական եւ տարբեր առիթներով, թող մարդիկ փոխան թանկարժէք նուէրների գիրք նուիրեն, այսպիսով թէ՛ գրողները կը խրախուսուեն եւ թէ 'ընթերցասիրութեան սէրը կը զարգանայ:*

*Այս անգամ Թեհրանի հին ծանօթներիցս մէկին հանդիպեցի, խօսք բացուեց անցեալի դպրոցական շրջանի կեանքի մասին, թողէք անունը չյիշեմ, այսպէս աւելի յարմար է, նա ծիծաղը դէմքին յուշը պատմել սկսեց.*

*-Հայոց ազգային «Նայիրի» տարրական դպրոցի աշակերտ էի, չարաճճի եւ խաղամոլ, օրից մի օր երեք ընկերներով դպրոցի փողոցից քայլում էինք, երեքս էլ մէկ բոյի եւ մէկ դասարանցի, տեսայ մի հայ կին երեք գրքեր թեւատակը հանդարտ քայլերով գնում է, ընկերներիս դիմելով ասացի՝ «Տղէ՛րք, արէ՛ք, էս կնոջ ձեռքից գրքերը խլենք ու փախչենք»: Կէս լուրջ, կէս կատակ համաձայնուեցինք, ձեռնարկողը ես եղայ, կամաց նրա յետեւից մօտեցայ, գրքերը խլեցի եւ ընկերներով խոյս տուինք, թաքնուեցինք կնոջը մեր տեսադաշտից չհեռացնելով, կինը շուար ու ապշած առանց հարայ-հրոցի կանգնած մնաց, ապա լուռ ու մունջ հեռացաւ:*

*Պատմութիւնը գտայ հետաքրքիր, զգուշ լսելուց յետոյ դարձայ զրուցակցիս ասելով.*

*-Այդ յարգելի կինը ձեզ չհետապնդեց, հաւանաբար այն բանի համար, եւ ով գիտէ, նոյնիսկ ներքուստ ուրախացել էր, որ դուք այդ գրքերը կը տանէք, կը կարդաք, մի բան կը սովորէք, ձեր միտքն ու հոգին կը լուսաւորուի, գիտելիքներ կ'ամբարէք եւ առողջ ու մարդկային կը մտածէք, ահա դրա համար նա աղմուկ-աղաղակ չի բարձրացրել: Գիտես որ գողութիւնը եւ թալանը դատապարտելի եւ խիստ պատժելի են, ինչ առումով էլ որ լինի: Լա՛ւ, այդ գրքերը ի՞նչ արեցիք.*

*-Հաւատայ, հիմա որ էս տարիքին եմ հասել, արարքիս համար ամաչում եմ, բայց քանի որ պատմել եմ սկսել, կը վերջացնեմ: Երբ միամտուեցինք, որ կինը մեզ չի հետապնդելու, գրքերը բաժանեցի, ամէն մէկիս մէկ հատ հասաւ, լաւ յիշում եմ, ինձ Սիամանթոյի գիրքն էր բաժին ընկել, բոլորս միասին սկսեցինք գրքերը թերթատել, նկարները պոկել եւ պահել մեր մօտ, իմ գրքում մէկ նկար կար, այն էլ Սիամանթոյի նկարն էր, միտս չի, թէ նրանցը ինչ նկարներ էին:*

*-Ուրեմն գրքերը զրկեցիք իրենց կարեւոր նկարներից, յետոյ ինչ խաղացիք նրանց գլխին:*

*-Գրքերը ծալած մեր ձեռքերում տեսանք ոչ կարդացողն ենք, ոչ ծախելու եւ ոչ էլ անհրաժեշտ իրեր են, զղջանքի հոգեվիճակ ձեռ տուեց մեզ, տարբեր մտքեր անցան մեր ուղեղից նրանցից ազատուելու համար, վերջապէս որոշեցինք մեր կողմից որպէս նուէր յանձնել դպրոցին, այդ պարտականութիւնը ինձ յանձնարարուեց:*

*Ցաւալի եւ պախարակելի մտածելակերպ, աշխարհը գրքերի շնորհիւ է գիտական այս աներեւակայելի բարձունքին հասել եւ դեռ շարունակւում է, գիրքը համարել անարժէք, իրապէս ողբերգութիւն է… Եղել եւ կան մարդիկ որ իրենց օրապահիկը յատկացրել են գրքի՝ իրենք-իրենց ուրախ եւ երջանիկ զգալով:*

*-Իրա՞ւ, այդ եզրակացութեան հասա՞ք:*

*-Ինչ սուտ ունեմ ասելու քեզ:*

*-Արդարեւ էս մէկը շատ լաւ էիք մտածել, գոնէ այսպիսով ձեր մեղքը մասամբ թեթեւացրել էք:*

*-Առաւօտեան ուրախ ու զուարթ, ինչու չէ նաեւ հպարտ, ներկայացայ դպրոցի տեսչին գրքերը ձեռքումս: Էն օրօք դպրոցի տեսուչն էր լուսահոգի՝ պրն. Արամ Աղաբէգեանը, նա բարեհամբաւ եւ գիտուն տեսուչ էր, նա սիրով ընդունելով ինձ հարց ուղղեց ասելով.*

*-Ի՞նչ գործ ունես տղա՛ս.*

*Շար.ը էջ 19*

## ՍԱՐՖ-Ի ՓԵՏՐՈՒԱՐ 21-Ի ԹԵԼԵԹՈՆԸ

*Շարունակուած էջ 6–էն*

*գիտակից եմ անոր սիրոյն, հոգածութեան, կարեկցութեան, ազնուութեան, բարութեան եւ տկարը գետնէն բարձրացնելու առաքելական ոգիին՝ հետեւելով Յիսուս Քրիստոսի օրինակին:*

*Փետրուարի 21-ին, Սուրիահայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը պիտի ունենայ դրամահաւաքի հեռուստամարաթոն մը «Կեանք մը Փրկել»ու կարգախօսով: Ազնուական արարք մը արդարեւ որ արժանի է մեր ամբողջական եւ միասնական աջակցութեան եւ հաւաքական մասնակցութեան: Թող ցուցա-բերուած սիրայօժար եւ առատաձեռն նուէրները՝ ուղղուած Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան «Սուրիոյ Օգնութեան Ֆօնտ»ին (Հեռ. 201.265.2607 - կայքէջ www.amaa.org), կամ Փետրուար 21-ի «Սուրիահայութեան Զօրակցութեան Ֆօնտի» դրամահաւաքի հեռուստամարաթոնին (Հեռ. 866.888.SARF - կայքէջ www.SARFtelethon.org), **ԿՏՐԵՆ ՏԱԼՈՒ ՄՐՑԱՆԻՇԸ** լռեցնելով կոտրուած սկաւառակներու տխուր նուագը:*

*Աջակցի՛նք «Կեանք մը Փրկել»ու:*

*Սփիւռքահայ Մայր Գաղութի կեա՛նքը:*

## ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է

*Շարունակուած էջ 6–էն*

*պէտք է աւելի դրական մօտեցում ցուցաբերենք մեր առօրեայ հարցերուն նկատմամբ եւ պէտք չէ յուսահատ ձեւով, կամ մութ ամպերու տակէն նայինք խնդիրներուն, այլ աւելի առողջ, պայծառ եւ յուսալից հայեացքով նայինք դէպի ապագան»:*

*Նշենք, որ անցնող 21-23 Յունուարին Օքսֆորտի մէջ տեղի ունեցած աշխատանոցը կազմակերպուած էր համալսարանի հայագիտական բաժնի պատասխանատու ՝ հայագէտ ՝ Դոկտ. Թէօ Վան Լինտթի, համալսարանի դասախօս՝ Դոկտ. Հրաչ Ջիլինկիրեանի եւ «Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամ»ի հայկական բաժանմունքի պատասխանատու Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի համատեղ ճիգերով:*

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՈՐ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ԿՐԿՆԷ

*Շարունակուած էջ 14–էն*

*թիւն է՝ ուր պատմութեան մէջ կը կրկնուի, բայց նաեւ կը կապուի ու կը կամրջուի մէկը միւսին հետ...: Եւ որովհետեւ առկայ է նաեւ կապը եւ կապուածութիւնը...: Թէ անցեալի «նահատակը» ապրեցաւ «վերապրողին» հետ ու տակաւին ներկայ եւ գալիք օրերու «ապրողը» կը շալկէ այդ բոլորին «ցաւը»:*

*Եթէ պատմութիւնն է որ ինքզինք կը կրկնէ եւ մարդկութեան հանդէպ ոճրագործութիւնը կապուած թէ անկապ իր հոլովոյթներով կը շարունակուի, բայց առկայ է նաեւ քաղաքակրթութիւնը եւ անոր ստեղծած մշակոյթը, որ կը յիշէ եւ կը յիշեցնէ...:*

*Թէ մարդկային կեանքը «սրբութիւն» է, եւ որ պարտին յարգել զայն...:*

*Բայց մինչ այդ՝ կայ տակաւին «Խաֆսայի» ցաւը...: Ու շատ մը «այլ» ցաւեր, հոս թէ հոն...: Որոնք կը կրկնուին ու կը շարունակեն «ցաւցնել»...:*

*Եւ մինչեւ երբ է որ պատմութիւնը պիտի շարունակէ կրկնել ինքզինք...:*

## ԴՈԿՏՈՐ ԳԷՈՐԳ ԽՐԼՈԲԵԱՆ

*Շարունակուած էջ 15–էն*

*ճէն, մեծերը կը մնան միշտ բարձ եւ անձեռնմխելի, նոյնիսկ մահուան գերանդին զանոնք հաւաքէ ու տանի, անոնք դարձեալ կը մնան վեր, ամէն բանէ աւելի վեր:*

*Այս մեծերէն մէկն ալ ինք էր Դոկտ. Գէորգ Խրլոբեան, որ նուաճած էր բարձունքներ եւ գրաւած՝ հոգիներ, մշակած էր մտքեր՝ եւ դարբնած նկարագրեր:*

*Այսօր, հինգ տարիներ ետք բոլորս կը խոնարհինք անոր անթառամ յիշատակին, համեստ մեծութեան եւ յաւէտ ուսուցիչի յիշատակին առջեւ :*

*Հողը թեթեւ գայ սիրելի մշակ:*

## ԶՂՋՈՒՄ

*Շարունակուած էջ 18–էն*

*-Այս գրքերը բերել եմ՝ նուիրեմ դպրոցին:*

*-Տեսուչը ուրախացած իմ արարքից ինձ փաղաքշեց գնահատելով.*

*-Շատ ապրես տղաս եւ ասաց. -կանչիր պրն. Դաւիթին, թող այստեղ գայ:*

*-Պրն. Դաւիթը մեր դպրոցի վերակացուն էր, նրան տեղեկացրի: Տեսուչը թէ.*

*-Պրն. Դաւի՛թ, էս մեր խելացի տղան այս գրքերը նուիրում է դպրոցին գրադարանի համար:*

*-Հենց այդ միջոցին ներս մտաւ երէկուայ կինը, որ գրքերը փախցրել էի, ինձ պրն. Դաւթին մատնացոյց անելով ասաց.*

*-Պրն. Դաւի՛թ, է՛ս, հենց երէկուայ տղան է, նրանք երեք հոգի էին:*

*-Տեսչարանը մթնեց աչքերիս, վախը պատեց ինձ, աթօռից քրտինք վրայ տուեց, կնոջ բողոքի վրայ բուրդս դարձաւ բամբակ, էդ եմ ասում, պրն. Դաւիթը երեքիս էլ ճիպոտով սաստիկ ծեծեց, լացն ու արցունքը բռնել էր մեր դէմքը, աղաչանքն ու պաղատանքը տեղ չէր հասնում.*

*-Անպիտաննե՛ր, մարդկանց ձեռքերից գիրք էք փախցնում, դէ՛հ, կերէ՛ք, լաւ որ գրքերը վերադարձրեցիք, եթէ ոչ ձեր պատիժը աւելի խիստ կը լինէր...*

*-Ծեծն ու դէպքը մնացին վառ իմ յուշապատկերում որպէս յիշեցում իմ ամօթալի արարքի:*

*Մինչեւ ոչ հեռու անցեալում մեր մօտ դպրոցներում տարածուած էր ծեծը, որոշ անփորձ ուսուցիչների զէնքն էր երբեմն անտեղի ծեծելը, որոնք աւեր կը գործէին զգուանք պատճառելով դպրոցից ու դասից:*

*Դպրոցական պատիժը կարիք է, ոչ ծեծ, այն էլ չափուած ու դատուած՝ նայած ինչ խառնուածքով աշակերտի նկատմամբ:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Վարդան եւ Կարինէ Տեփոյեան կու գան իրենց խորին շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց որոնք հեռագրով, հեռաձայնով, այցելութեամբ, ծաղկեպսակով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց հօր՝ **ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆԻ** մահուան սուգին:*

*Այս առիթով $200 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*Ընկեր. Ճորճ Յակոբեան վերջերս Լաս Վեկասի մէջ վիրաբուժական լուրջ գործողութեան մը ենթարկուած ըլլալով այժմ կը բոլորէ իր ապաքինման շրջանը: Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք յարգելի ընկերոջ:*

*«Մասիս»*

## ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԱՊՐՈՂ

*Շարունակուած էջ 13–էն*

*եւ զարգացնել լեզուն: Կարծում եմ, դրա համար մեծ երաշխիք է ոչ միայն գեղարուեստական, այլեւ ժամանակակից արուեստաբանական, փիլիսոփայական, հոգեվերլուծաբանական, աստղագիտական, գրականագիտական, լեզուաբանական եւ միւս բոլոր ոլորտների արժէքաւոր երկերի թարգմանութիւնը... Նա՝ արեւմտահայի նոր սերունդը, լինելով ամենաքիչը երկու՝ իր ծննդավայրի եւ իր պահպանած լեզուների կրողը, վերջինիս շնորհիւ արեւելահային կարող է հնարաւորութիւն տալ ճակատագրով իրեն բաժին հասած աշխարհի մշակոյթին ծանօթանալ: Այսօր ստեղծուած է մեր երկու գրական լեզուների թարգմանիչ ծրագիր, նոյնիսկ նպատակ կայ արեւմտահայ գրականութիւնը թարգմանել արեւելահայերէն, ինչը ամենամեծ անհեթեթութիւնն է: Զգիտեմ, թէ ինչով է հիմնաւորւում արեւմտահայերէնը արեւելահայերէնի եւ հակառակը թարգմանելու անհրաժեշտութիւնը, որի համար մեծ ջանքեր ու միջոցներ են տրամադրուել եւ տրամադրւում են, երբ իրականում հայը հային հասկանալու խնդիր գրեթէ չունի կամ գոնէ չպէտք է ունենայ: Եւ ոչ նուազ միջոցներ են ներդրւում ու դեռ ներդրուելու են (անշուշտ՝ ոչ ի զուր), որպէսզի արեւելահայ բանասէրը գերազանցապէս իւրացնի որեւէ օտար լեզու՝ վերջինից անխոչընդոտ ու հարազատ հայերէն թարգմանութիւն կատարելու համար: Եւ դեռ հարց է, թէ կարող է այդ թարգմանութիւնը լինել բնօրինակին նոյնքան հարազատ, որքան ունակ է կատարել օտար լեզուն մայրենիին հաւասար բոլոր նրբութիւններով իմացող հայը: Եւ դեռ չեմ ասում, թէ թարգմանչի համար որքան կարեւոր է ճանաչել թարգմանելիք գրականութիւնը ստեղծողի լեզուամտածողութիւնը, որ գործնականում այնքան էլ դիւրին չէ՝ առանց նրա միջավայրում ապրելու: Նաեւ արեւելահայերէն գրականութիւնը օտարին ճանաչելի դարձնելու գործում Սփիւռքը մեծ դեր խաղացել է եւ կարող է խաղալ՝ թարգմանելով այն իր երկրորդ մայրենի լեզուով: Այս առումով մենք մեծ հարստութիւն ունենք, որը արդիւնաւէտ չենք օգտագործում, եւ որը գործնականում առաւելագոյնս փայլելու հնարաւորութիւն ունի, եթէ ճիշտ կազմակերպուի գործը: Ուրեմն անհրաժեշտ է վերանայել մեր թարգմանչական գործը եւ այն խրախուսելով՝ լայնօրէն յանձնարարել Սփիւռքի մեր մտաւորականներին: Բոլոր ոլորտների մասնագէտները կարող են իրենց գիտելիքներն ու կարողութիւնները օգտագործել ի նպաստ ազգային մշակոյթի զարգացման, եւ դա անել յատկապէս արեւմտահայերէնի եւ այլ լեզուի կրողը լինելու ճակատագրօրէն եւ կենսականօրէն իրենց բաժին ընկած բացառիկ մենաշնորհով: Իսկ մենք հայրենիքում արեւմտահայերէնը գերազանց ճանաչելու հարցը պիտի լուծենք, որին հրաշալի կերպով կ՛օգնի նաեւ օտար գրականութիւններին արեւմտահայերէնով ծանօթանալու արդէն նշածս հնարաւորութիւնը: Մինչեւ Խորհրդային Միութեան փլուզումը եւ կայունութեան օրէնքով՝ մինչ օրս, համաշխարհային մշակոյթի հետ արեւելահային կապող միակ միջնորդ լեզուն ռուսերէնն է եղել, իսկ օտարալեզու գրականութեան թարգմանութիւնը հիմնականում ոչ բնօրինակից, այլ ռուսերէնից: Միայն վերջերս հրատարակչութիւններն սկսեցին գրքերի վերատպութիւն արդէն որպէս բնօրինակից կատարուած թարգմանութիւններ: Որքան տեղին պիտի լինի, եթէ մեր եւ աշխարհի միջնորդ լեզուն լինի արեւմտահայերէնը: Այսպիսով, ոչ թէ մէկ, այլ մի շարք կարեւոր խնդիրներ հնարաւոր կը լինի լուծել. համաշխարհային գրականութեանն ու առաջաւոր մտքին հայերէնով հնարաւորինս աւելի վաղ ծանօթանալ, քան դա հնարաւոր էր լինում նախկինում, արեւմտահայերէնը Հայաստանի Հանրապետութիւնում դարձնել արեւելահայերէնին հաւասարազօր ամենօրեայ ընթերցումի եւ գիտութեան լեզու, արեւելահայ եւ արեւմտահայ գրականութիւնների գործուն թարգմանութիւն օտար լեզուներով եւ այլն...*

*Այո, արեւմտահայերէնի հանդէպ չկայ կամ նուազ է պետական հոգածութիւնը... Արեւմտահայերէնը հարազատ զաւակի պէս վստահօրէն պիտի մտնի դպրոցական ծրագրեր, պիտի լինի ոչ միայն բանասիրական ֆակուլտետի կարճատեւ ուսումնասիրութեան առարկան, այլեւ դրուի թարգմանչական նոր դպրոցի ստեղծման հիմքում եւ իր միջոցներով հարստացնի մեր ընդհանուր գիտութիւնն ու հոգեւոր մշակոյթը...*

*Մեր ոսկեդարի սիւները թարգմանիչները եղան, եւ մեր լեզուն իր շքեղ ճառագումի տարերքը ապրեց հենց այդ ժամանակ...*

A.G.B.U.
MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
&
PARENT-TEACHER ORGANIZATION

*Cordially invite you to the School's*

# *Fortieth Anniversary*
# *Annual Gala*

*- Under the Patronage of -*
A.G.B.U. CENTRAL BOARD OF DIRECTORS

*- Honoring -*
MR. SINAN SINANIAN
A.G.B.U. Manoogian-Demirdjian School, Board Chairman

**Saturday, February 27, 2016**
Cocktails 7:00 PM / Dinner 8:00 PM

**The Beverly Hilton - Beverly Hills**
9876 Wilshire Boulevard, Beverly Hills, California 90210

$250 Per Person

*For more information please call*
*Lori Svadjian at AGBU MDS (818) 883-2428 Ext. 102*